# Ազգ

Azg

24 ՄԱՐՏ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 51(4670)

ISSN: 1829-1651


## Հակառակորդի որեւէ սադրանք անպատիժ չի մնում

Հարցին, արդյոք հայկական կողմը ռազմական առումով չի՞ կիրառում դիրքաւորված դիպուկահարների կրակոցով հայ զինվորներին սպանած հակառակորդին պատժելու գործողություններ ու բավարարվում է միայն հայտարարություններով, ՊՆ մամլո քարտուղար Դավիթ Կարապետյանն ասել է. «Հակառակորդը ակտիվացրել է դիպուկահարների գործողությունները՝ փորձելով հավելյալ լարվածություն հաղորդել հակամարտությանը: Հակառակորդի որեւէ սադրանք անպատիժ չի մնում: Պատժում ենք խստորեն, իսկ նրանց մարդկային կորուստների մասին հայտարարելը մեր գործը չէ: Տարբեր ուսումնասիրություններ վկայում են, որ Ադրբեջանի սանձազերծված սադրանքները ավարտվում են ադրբեջանցիների ավելի մեծ կորուստներով: Ցավոք, նրանք դեռեւս դասեր չեն քաղում»:

## Մարի Յովանովիչը՝ համակարծիք Մեթյու Բրայզայի հետ

### Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցը մնում է ԱՄՆ-ի օրակարգում

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱՏՕ-ն եւ ՆԱՏՕ-ի հարաբերությունները Հայաստանի հետ առանձնակի մեծ հետաքրքրություն չեն ներկայացնում, երբ այդ թեմաների մասին խոսում է Միացյալ Նահանգները ներկայացնող պաշտոնյան: Հայ իրականությունում ամերիկյան դիվանագետներին տրվելիք շատ այլ հարցեր կան, որ առավել կարեւոր են, քան այն, թե երբ է հիմնադրվել ՆԱՏՕ-ն եւ ինչ առաքելությամբ:



ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնում Հայաստանում հավատարմագրված ՆԱՏՕ-ի անդամ երկրների դեսպանների հետ հանդիպումների շարքում երեկ իր տեսակետներն էր ներկայացնում Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան **Մարի Յովանովիչը**: Հայաստանի ներքաղաքական իրավիճակին առնչվող հարցերին ի պատասխան Յովանովիչը նշեց, որ հաշվետու կառավարություն ասվածը բնավ էլ չի նշանակում, թե կառավարության քայլերը պետք է հավանության արժանանան յուրաքանչյուր քաղաքացու կողմից: Սակայն մարտի 1-ի առնչությամբ ձերբակալվածներին ազատ արձակելու գործընթացը ԱՄՆ-ի խրախուսանքով է առանձնանում:

2008-ի մարտի 1-ի իրադարձությունների առնչությամբ եւ արաբական վերջին իրողությունների ֆոնին ԱՄՆ-ի մոտեցումների տարբերությունները դեսպանը չի վիճարկում, նշելով, որ Միացյալ Նահանգները տարբեր իրավիճակներում առաջնորդվում է այդ երկրի ազգային անվտանգության շահերով ու ԱՄՆ-ի որդեգրած սկզբունքներով:

Տես էջ 3

## Ստեփանակերտի կատարման դեպքում հայկական կողմը կփակի Ադրբեջանի օդային տարածքը

**Ադրբեջանից հնչող սպառնալիքին, որ Ստեփանակերտի նորակառույց օդանավակայանում չվերթերի դեպքում հայկական օդանավերը կիրթիռակոծվեն, երեկ արձագանքել է պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի մամլո քարտուղար Դավիթ Կարապետյանը. «Ադրբեջանի ղեկավարության ագրեսիվ ու ռազմատենչ վարքագիծը հանգեցրել է նրան, որ ռազմամոլությունն այդ երկրում համակել է նաեւ քաղաքացիական պաշտոնյաներին, այդ թվում, ինչքան էլ տարօրինակ լինի, քաղաքացիական ավիացիայի ղեկավարին: Հայկական զինված ուժերի հակաօդային պաշտպանության կարողությունները ի զորու են պաշտպանել մեր երկինքը, իսկ հակառակորդի ցանկացած արկածախնդրության փորձ կավարտվի նրա մեծ կորուստներով»:**

**Ռազմական փորձագետ Արծրուն Հովհաննիսյանի վստահեցմամբ՝ հայկական կողմը ունի բոլոր հնարավորությունները համարժեք պատասխան տալու Ադրբեջանին: «Եթե նրանք համարձակվեն նման հանդգնության ու տոռության դիմել, ապա տեխնիկապես նման բան կատարելը գրեթե անհնար է: Ադրբեջանի հակաօդային պաշտպանությունը տեխնիկապես այնքան էլ հզոր չէ՝ նման քայլի դիմելու համար: Մինչդեռ հայկական կողմն ավելի լավ է պատրաստված ու տեխնիկապես ավելի լավ վերազինված: Հայկական հակաօդային պաշտպանությունը տարածաշրջանում, անգամ Թուրքիայի ու Իրանի հակաօդային պաշտպանության հետ համեմատած, լավագույնն է: Երկրի աշխարհագրական դիրքն ու տեխնիկական պատրաստվածությունն էլ հնարավորություն կտան Ադրբեջանի սպառնալիքների կատարման դեպքում ավելի լուրջ քայլի դիմել՝ փակել Ադրբեջանի օդային տարածքը»:**

**Երեկ ԼՂՀ կառավարությունը հաստատել է Ստեփանակերտի օդանավակայանի վերագործարկման կապակցությամբ զբոսաշրջության ոլորտում իրականացվելիք միջոցառումների շարքը: Կբացվի օդանավակայան-Ստեփանակերտ ավտոբուսային հատուկ երթուղի: Կբարեկարգվի «Մենք ենք, մեր սարերը» հուշարձանի տարածքը:**

**Այս ու էլի մի շարք միջոցառումներ կառավարությունը նախատեսում է իրականացնել մինչեւ մայիսի 9: Այժմ Ստեփանակերտում նախապատրաստական վերջին աշխատանքներն են ընթանում: ԼՂՀ քաղավիացիայի վարչությունից խոսանում են, որ Ստեփանակերտի օդանավակայանը ոչնչով չի զիջի Բաքվի օդանավակայանին:**

**Հ. Հ.**

## Նամակ Իլհամ Ալիեւին՝ «շատ մտահոգիչ ազդանշանի» մասին

**«Ես մտահոգ եմ, առաջինը, Ադրբեջանում երիտասարդ ակտիվիստների եւ ընդդիմության ներկայացուցիչների, հատկապես մարտի 11-ին եւ 12-ին Բաքվում տեղի ունեցած ցույցերից հետո կատարված ձերբակալությունների մասին տեղեկությունների թվի առնչությամբ», այսպիսի նամակ է գրել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար <u>Թորբյորն Յագլանդը</u> Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին:**

**Յագլանդի խոսքերով, որոշ զարգացումներ Ադրբեջանում մտահոգություն են ծնում այդ երկրում խոսքի ազատության, բազմակարծության եւ հավաքներ անելու ազատությունների պաշտպանության առումով, հատկապես որ Ադրբեջանը պարտավորվել է հարգել եւ պաշտպանել այդ իրավունքները որպես Եվրոպայի խորհրդի անդամ:**

**Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը հիշատակել է նաեւ լրագրող Էյնուլլա Ֆաթուլաեւի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մասին, ընդգծելով. «Ես դժգոհ եմ, որ Ադրբեջանի իշխանությունները շարունակաբար ձախողում են Ֆաթուլաեւի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումն իրականացնելու հարցում»: «Այդ ձերբակալությանը վերջ դնելու բոլոր միջոցները ձեռնարկելու ձախողումը շատ մտահոգիչ ազդանշան է տալիս...», նամակում նշել է Յագլանդը:**

**Յագլանդը նաեւ պատրաստակամություն է հայտնել ինչպես բոլոր հարցերում աջակցելու Ադրբեջանին, այնպես էլ այցելելու այդ երկիր՝ «ողջունելով հնարավորությունը քննարկելու նամակում բերված հարցերը» Ալիեւի եւ նրա վարչակազմի հետ այցելության շրջանակներում:**

**Յագլանդը սպասում է Ալիեւի պատասխանին:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Վարդան Օսկանյանի հայտարարությունը

Երեկ հայտարարությամբ է հանդես եկել նախկին արտգործնախարար **Վարդան Օսկանյանը**. «Այսօր եւս մեկ անգամ այցելեցի Հայաստանի նախկին արտգործնախարար եւ «Ժառանգություն» կուսակցության հիմնադիր **Րաֆֆի Հովհաննիսյանին**, որը հացադուլի մեջ է արդեն ութ օր: Նրա հետ զրույցից պարզ է դառնում, որ ընդդիմության մեկ թեւի առաջնորդը հաստատակամ է շարունակելու իր քաղաքական բողոքը եւ անհամաձայնությունը վարվող քաղաքականությանը: Այնուամենայնիվ, հացադուլի ամեն հաջորդ օր անդրադառնում է նրա առողջության վրա, եւ դա գնալով ավելի ակնհայտ է դառնում: Անկասկած, իր այս քայլով Րաֆֆի Հովհաննիսյանը արտահայտում է Հայաստանի բնակչության մի ստվար զանգվածի հուսահատությունը եւ հեռանկարի բացակայությունը:

Հաշվի առնելով այն փաստը, որ ներկա նախագահը 2007-ին դեռ վարչապետի պաշտոնում այցելել է նշանավոր բռնցքամարտիկ Իսրայել Հակոբկոխյանին եւ հորդորել դադարեցնել քաղաքական դրդապատճառներից սկսած հացադուլը, ապա, կարծում եմ, հանրապետության նախագահը նույն քայլը կարող է ձեռնարկել Րաֆֆի Հովհաննիսյանի պարագայում: Այս քայլը կնպաստի Հայաստանի ներքաղաքական իրադրության բարելավմանը, ինչպես նաեւ ելք կլինի ստեղծված իրավիճակից»:

## ԱՄՆ-ը կասկածանքով է վերաբերվում իրանական ինքնաթիռներին

### Իսկ Թուրքիան ասիպում է հարկադիր վայրէջք կատարել

Որքան էլ Թուրքիան Իրանի միջուկային ծրագրի հարցում հակադրվի ԱՄՆ-ին եւ ի լուր աշխարհի հայտարարի տարաձայնությունների մասին, այնուամենայնիվ, չի կարողանում անտեսել Վաշինգտոնի պահանջները: Խոսքը տվյալ դեպքում իրանական ավիացիային պատկանող բեռնատար ինքնաթիռների մասին է, որոնք մարտի 15-ին եւ 19-ին թուրքական ռազմական ինքնաթիռների ճնշմամբ հարկադիր վայրէջք են կատարել Դիարբեքիրի օդանավակայանում:

Իրանական ինքնաթիռները Սիրիա էին թռչում: Այս հանգամանքը կասկածանք է առաջացրել Վաշինգտոնում, թե դրանք բեռնված են միջուկային հումքով եւ զենքով, որն էլ ինքնաթիռներին իջեցնելու ՆԱՏՕ-ով միջնորդավորված պահանջ է ներկայացրել Թուրքիային: Այսպիսով, ինքնաթիռները Դիարբեքիրի օդանավակայանում խուզարկվել են:

Նշելով մարտի 22-ի համարում այդ մասին, «Աքշամ» թերթը գրում է, որ իրանական ինքնաթիռների հարկադիր վայրէջքը նոր երեւույթ չէ Թուրքիայում: Այս պրակտիկան կիրառվում է 2010-ի հունիսից, երբ ՄԱԿ-ն ընդունեց Իրանի նկատմամբ պատժամիջոցների դիմելու որոշումը:

Թեեւ թուրքական թերթը վկայում էր, որ իրանական ինքնաթիռներում միջուկային հումք կամ զենք չի հայտնաբերվել, սակայն Թուրքիայի արտգործնախարարության մարտի 23-ի հայտարարության մեջ ասվում է դրա ճիշտ հակառակը. «Մարտի 19-ի երեկոյան Դիարբեքիրի օդանավակայանում վայրէջք է կատարել Իրանից Սիրիա թռչող ինքնաթիռը: Խուզարկումների հետեւանքով իրանական ինքնաթիռում հայտնաբերվել են ՄԱԿ-ի պատժամիջոցների որոշմամբ արգելված նյութեր, որոնք առգրավվել են, եւ ինքնաթիռն առանց այդ նյութերի վերադարձել է Իրան»:

Հ. Չ.

## Մահացել է Հոլիվուդի Դիվա Լիզ Թեյլորը

Մարտի 23-ի վաղ առավոտյան Լոս Անջելեսի հիվանդանոցներից մեկում սրտի անբավարարությունից մահացել է Հոլիվուդի լեգենդար դերասանուհիներից Էլիզաբեթ Թեյլորը: Վերջին տարիին 79-ամյա դերասանուհու մահճի մոտ են եղել երեխաներն ու թոռները: Ավելի քան 50-ամյա կարիերայի ընթացքում նկարահանվել է 50-ից ավելի ֆիլմերում: Դրանցից առավել հայտնի են նրա խաղարկմամբ «Կլեոպատրա» (ի դեպ, 1963-ին Կլեոպատրայի համար նա ավելի քան 7 միլիոն դոլար է վաստակել), «Ո՞վ է վախենում Վիրջինիա Վուլֆից» ֆիլմերը: Երկու անգամ արժանացել է Օսկարի: 1993-ին նրան Հատուկ Օսկարի են արժանացրել նաեւ ՁԻԱՀ-ի դեմ պայքարում ցուցաբերած ակտիվության համար:



Աշխարհի ամենագեղեցիկ դերասանուհիներից մեկը ծնվել է 1932-ին Լոնդոնում, վաղ տարիքում արդեն աչքի է ընկել արվեստի հանդեպ ունեցած ընդունակություններով, 7-ամյա աղջնակի պարը հիացրել է Բրիտանիայի թագավորական ընտանիքին: Այնուհետեւ ծնողների հետ հաստատվել է Կալիֆոռնիայում, ուր միանգամից նկատել են մանուկ աստղին՝ հրավեր է ստացել մասնակցել մյուզիքլներում: Նրա հրաշալի մարմնավորումներին զուգահեռ աշխարհը քննարկում էր նաեւ դերասանուհու վարքը՝ ժամանակակից արվեստի, զարդարվեստի մոլի հավաքորդ լինելը, ալկոհոլի հանդեպ սերն ու սիրային պատմությունների կարուսելը: Թեյլորն ամուսնացել է ութ անգամ, Ռիչարդ Բարթոնի հետ՝ երկու անգամ:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

# Խորհրդարանը ընտրական օրենսգրքի երկու նախագիծ քննարկեց

Երեկ Ազգային ժողովում շարունակվում էր ընտրական օրենսգրքի ՀՅԴ-ի նախագծի քննարկումը: ՀՀԿ-ականների հնչեցրած ելույթներից մի պահ ուրվագծվեց, թե կոալիցիան հակված է որոշ դրույթներ ներառել եւ միասնական ընտրական օրենսգիրք ստեղծելու երեւույթ արձանագրել, սակայն քննարկման ավարտին այնքան էլ պարզ չեղավ, թե դա ե՞րբ տեղի կունենա, արդյո՞ք փրկարար երկրորդ ընթերցման ժամանակ, երբ կոալիցիոն նախագիծն առաջին ընթերցում անցնի, թե՞ ընդհանրապես տեղի չի ունենա: Իսկ առավոտյան, նիստի սկզբում ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը հորդորեց նիստից բացակայող «Ժառանգությանը» մասնակցել խորհրդարանի աշխատանքին, քանի որ շատ կարեւոր օրենքներ են քննարկվում: Վերադառնալով քննարկմանը նկատենք, որ նախորդ օրվա շեշտադրումները շարունակվեցին` ՀՅԴ-ականները կրքոտ ելույթներ էին ունենում, պնդում իրենց առաջարկները, առանց որոնց հնարավոր չէ նորմալ ընտրական օրենսգիրք եւ ընտրական գործընթաց ունենալ, ՀՀԿ-ից Գալուստ Սահակյանն ու Սամվել Նիկոյանը առավել շատ հաշտվողական շեշտադրում էին անում: Իսկ երբ ՀՅԴ-ական Վահան Հովհաննիսյանը կոալիցիային դիմեց, թե խոստովանեք` քվեարկողների ցուցակների հրապարակմանը դեմ եք, քանի որ այդ դեպքում պարզ կդառնա այն, ինչ ինքը վաղուց գիտե (ուրիշի փոխարեն քվեարկությունը նկատի ուներ), նրանից հետո ելույթ ունեցած ԱԺ ՀՀԿ-ական փոխնախագահ Սամվել Նիկոյանն առաջարկեց ներառել այդ դրույթը կոալիցիոն նախագիծ` անհասկանալի համարելով մասնակցի գաղտնիության սկզբունքի խախտումն այդ դեպքում, երբ թույլատրվում է, որ ամեն ոք նկարահանումներ կատարի: Տիգրան Թորոսյանն իր խոսքում անդրադարձ անելով քաղաքական անառողջ համակարգին` ե՛ւ ընդդիմադիր, ե՛ւ իշխանական, ի վերջո եզրակացրեց, որ ընդունված փաստաթղթից ոչինչ կախված չի լինելու, հարցերի պատասխանը նորմալ ընտրություններ անցկացնելու մեջ է: Սակայն ՀՅԴ-ականների ելույթները մի փոքր իրարից տարբեր շեշտադրումներ ունեին, օրինակ` Արտաշես Շահբազյանն ասում էր, թե այլընտրանքային օրենսգիրք քննարկելով` իրավական ձեւակերպումների խնդիր չենք լուծում, այլ քաղաքական` երկրի հեռանկարի հետ կապված, եւ հնարավոր է, որ դահլիճից ի վերջո դուրս գան կոալիցիա-ընդդիմություն միասնական նախագծին կողմ քվեարկած: Եթե ոչ, հասարակության մեջ մի թերահավատություն կամրապնդվի, որ ընտրությունները նորմալ չեն լինելու: Իսկ Արծվիկ Մինասյանը իր եզրափակիչ ելույթում խոստացավ, թե թույլ չեն տա շահարկումների կամ քաղաքական շոուի վերածել այս քննարկումները` միջազգային կազմակերպություններին ցույց տալով, որ լավ էլ քննարկեցվեց ընդդիմության հետ: Մի խոսքով` չհասկացանք, վերջն ի՞նչ է լինելու: Մանավանդ որ Վիկտոր Դալլաքյանը հռետորական հարց ուղղեց, թե արդյո՞ք ՀՀ-ում կա միամիտ որեւէ մարդ, որ հավատա, թե ՀՀ-ում ԸՕ-ով է անցկացվել որեւէ ընտրություն, իսկ Արա Նռանյանը պատմում էր, թե ոնց են Հայաստանի իշխանությունները ոչ թե ընտրություններով իշխանություն կազմավորել, այլ հերթով հանձնել են իշխանությունը մեկը մյուսին` պայմանավորվելով, եւ այդպես էլ շարունակվելու է:

### ԱԺ-կառավարություն հարցուպատասխան

Երեկ բավական հետաքրքրական էին Ազգային ժողով-կառավարություն հարցուպատասխանի շեշտադրումները: Վարչապետ Տիգրան Սարգսյանը, պատասխանելով ՀՀԿ-ական Արտակ Դավթյանի` Ճապոնիայի երկրաշարժից տուժածների եւ ատոմակայանների անվտանգության հարցին, տեղյակ պահեց, թե Հայաստանը հնարավորինս ներգրավված է Ճապոնիայի տուժած բնակչությանը օգնություն տրամադրելու հարցում, առաջին իսկ օրվանից օգնություն է առաջարկել` արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարների եւ ջուր ուղարկելու առումով: Ճապոնական կողմն արձանագրել է, որ անհրաժեշտության դեպքում կօգտվի առաջարկից: Նրա խոսքով` աղետը բոլոր մասնագետների ուշադրությունը կրկին սեւեռեց ատոմակայանների անվտանգության խնդրի վրա: Հայաստանի էներգետիկայի նախարարին հանձնարարված է միջազգային մասնագետների հետ քննարկել, թե աղետից ինչ հետեւություններ պետք է արվեն: Սակայն նոր էներգաբլոկի կառուցման ծրագրերը կյանքի են կոչվելու: Ուշադրության պետք է արժանանան ենթակառուցվածքների անխափան աշխատանքի խնդիրները, երկրաշարժի ուղղակի հարվածների ռիսկերի հետ միասին` անուղղակի ռիսկերի հնարավորությունը: Բայց պարզ է նաեւ, որ նոր սերնդի ատոմակայանները հուսալիության բարձր աստիճան ունեն, այնպես որ` նոր բլոկի հետ կապված ծրագրերը շարունակելի են:

ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանից պատգամավոր Տաճատ Վարդապետյանը հետաքրքրվեց, թե ԵԱՀԿ գործող նախագահն ինչու էր Հայաստանին միակողմանի առաջարկ անում` շփման գծից դիպուկահարներին հետ քաշել, իսկ Ադրբեջանին այդպիսի առաջարկ չի արվել: Է. Նալբանդյանը պատասխանեց, որ որ Լիտվայի արտգործնախարար Աժուբալիսը այդ էքսպրոմտ առաջարկը Ադրբեջանում միգուցե չարեց` բարի կամք եւ կառուցողական մոտեցում չտեսնելով Բաքվում հարցի վերաբերյալ եւ անկեղծ մտահոգություն ունենալով, որ զոհերի թիվը կարող է ավելանալ, ու փորձելով այդ ուղղությամբ դրական տեղաշարժ անել Հայաստանի օգնությամբ: Մինչդեռ, նկատի ունենալով, որ Ադրբեջանը վերջին մի քանի տարվա ընթացքում համառորեն մերժում է միջազգային հանրության` շփման գծից դիպուկահարներին դուրս բերելու առաջարկները, հենց նրա հետ պետք է առաջին հերթին աշխատել, եւ ոչ թե առաջարկին դրական արձագանքած Հայաստանի եւ Ղարաբաղի: Արդյո՞ք այս տեսակետից հետո այդպիսի առաջարկ կարվի Ադրբեջանին. Նալբանդյանը կարծում է, որ Աժուբալիսը եւս մեկ առաջարկ կանի, այդպիսի առաջարկներ արել են Բան Կի Մունը, Մինսկի խմբի համանախագահները, միջազգային հանրության տարբեր ատյաններ, բայց Ադրբեջանը մինչեւ օրս համառորեն մերժում է այդ առաջարկները:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Վրաստանի պատվո շքանշան` Հրաչ Սիլվանյանին

Մարտի 22-ին Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին ընդունել է Վրաստանում իր առաքելությունն ավարտող Հայաստանի դեսպան Հրաչ Սիլվանյանին:

Ինչպես տեղեկացնում է Հայաստանի արտգործնախարարությունը, Վրաստանի նախագահ Սաակաշվիլին բարձր է գնահատել առաքելությունն ավարտող Հայաստանի դեսպանի ներդրումը հայ-վրացական համագործակցության ամրապնդման եւ ընդլայնման գործում: Հրաչ Սիլվանյանը Սաակաշվիլու կողմից պարգեւատրվել է Վրաստանի պատվո շքանշանով:

Ա. Հ.



# Արա Ակիշյանը վերընտրվեց

«Հայաստան» համահայկական հիմնադրամի ԱՄՆ-ի արեւմտյան շրջանի գործադիր վարչությունն իր վերջին նիստի ընթացքում միաձայն ատենապետ է վերընտրել իրավաբան Արա Ակիշյանին: Պրն Ակիշյանը 2001-2008 թթ. վարում էր նույն վարչության փոխատենապետի պաշտոնը, իսկ վերջին երկու տարիներին` վարչության ատենապետությունը: Ժողովին մասնակցել են Լոս Անջելեսի ՀՀ գլխ. հյուպատոս Գրիգոր Հովհաննիսյանը, ԱՄՆ արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Դերդերյանը եւ Հայր Կոմիտաս Թորոյանը, Հայ կաթողիկե, Հայ ավետարանական եկեղեցիների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ Թեքեյան մշակութային միության, Համազգայինի, ՀԲԸՄ, Հայկական համագումարի, ՀՕՄ-ի եւ Նոր սերունդ մշակութային միության ներկայացուցիչներ:

Արա Ակիշյանը Հարավային Կալիֆոռնիայի հայ համայնքի հայտնի իրավաբաններից է, որն երկու տասնյակից ավելի ունի իր սեփական իրավաբանական գրասենյակը: Նա նաեւ 15 տարի Թեքեյան մշակութային միության Արշակ Տիգրանյան (Լոս Անջելես) վարժարանի հոգաբարձուների անդամ է: Հայ հայտնի իրավաբանը արժանավոր որդին է վաստակաշատ կրթական գործիչ եւ Ռամկավար ազատական կուսակցության երկարամյա նվիրյալ Երվանդ Ակիշյանի:

Մ. Մ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

# 55 լեռնային գյուղերի համար` 21 մլն դոլար

## *Համաշխարհային բանկը տրամադրեց իր բաժին 16 մլն դոլարը*

**Համաշխարհային բանկի տնօրենների խորհուրդը հաստատել է Հայաստանի համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության ծրագիրը, որով մեր երկրի 6 մարզերի (Տավուշ, Շիրակ, Գեղարքունիք, Լոռի, Արագածոտն, Սյունիք) 55 գյուղական լեռնային համայնքներին կտրամադրվի 16 մլն դոլար: Ծրագրի մասին երեկ հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ մանրամասներ հաղորդեց Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակի տնօրեն Ժան Միշել Հապին:**

**Ըստ ՀԲ երեւանյան գրասենյակի տնօրենի, գյուղատնտեսությանն աջակցելու ծրագիրը, որի ընդհանուր արժեքը 21 մլն դոլար է, եւ 5 մլն դոլարը համաֆինանսավորվելու է Հայաստանի կառավարության կողմից, պայմանավորված է նրանով, որ այս ոլորտը զգալի մասնաբաժին ունի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ), կարեւոր գործոն է աղքատության նվազման եւ պարենային ապրանքների գների վրա ունեցած ազդեցությամբ: Ծրագրի նպատակն է բարելավել արոտավայրերի եւ մշակովի բույսերի համար նախատեսված տարածքների օգտագործումը: Ժան Միշել Հապին նշեց, որ դրանք թերի են օգտագործվում: Նախատեսվում է նաեւ աջակցել անասնաբուծությանը, հողերի արտադրողականության բարձրացմանը, խրախուսել անասնապահական կոոպերատիվների ստեղծումը, ինչպես նաեւ այդ գյուղերում իրականացնել ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրագծեր եւ այլն) վերականգնման աշխատանքներ: Տեղեկացվեց, որ այս ծրագրից օգտվելու է վերոնշյալ գյուղերի մոտ 80 հազար բնակչությունը, իսկ արդյունավետության բարձրացման ծրագրեր են իրականացվելու 145 հազար հա հողերի համար: Համաշխարհային բանկի վարկը 5 տարվա ծրագրի համար կտրամադրվի արտոնյալ պայմաններով, տարեկան 0,75 տոկոսով, առաջին 10 տարին առանց վճարումների:**

**Ի՞նչ չափանիշներով է երեւալու ծրագրի արդյունավետությունը: Այս հարցին պատասխանեց ՀԲ երեւանյան գրասենյակի գյուղատնտեսության եւ բնապահպանական հարցերի պատասխանատու Արտավազդ Հակոբյանը: Նա տեղեկացրեց, որ կան արդյունավետության չափման 4 չափանիշներ: Առաջինը` կաթնատվությունն ու մսատվությունը վերոնշյալ 55 գյուղերում 5 տարի հետո պետք է ավելացած լինեն 20 տոկոսով: Երկրորդը համայնքային արոտավայրերի օգտագործման արդյունավետությունն է, որը պետք է երեւա դրանց վարձակալությունից ստացված եկամուտներից: Այսինքն, կստեղծվեն կոոպերատիվներ, որոնք կվարձակալեն եւ համատեղ կօգտագործեն արոտավայրերը: Երրորդը անասնապահական մթերքներից ստացած եկամուտների ավելացումն է: Չորրորդը արոտավայրերի կառավարման արդյունավետության ինդեքսի բարձրացումն է մինչեւ 80-ի, որն այժմ 0 է:**

**«Ազգի» հարցն ուղղված էր համայնքների կողմից իրականացվելիք ենթակառուցվածքների ծրագրերի վերահսկողությանը` նկատի ունենալով համայնքներում կառավարման ցածր մակարդակը: Այս առթիվ Ժան Միշել Հապին ասաց, որ նախկինում գյուղերում իրականացված ծրագրերի փորձը ցույց է տվել, որ կան գյուղեր, որոնք կարող են իրականացնել նման ծրագրեր եւ լավ արդյունք տալ: Սակայն նա միաժամանակ ընդունեց, որ այստեղ կան ռիսկեր, ուստի լինելու է վերահսկողություն գյուղնախարարության ծրագրի իրականացման գրասենյակի, ինչպես նաեւ անընդհատ մոնիտորինգ Համաշխարհային բանկի կողմից:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# «Գների զսպումը կարճաժամկետ հատվածում կարող է դրական լինել, իսկ երկարաժամկետ հատվածում` բացասական»

## *Կարծիք հայտնեց ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավարը*

**Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակի տնօրեն Ժան Միշել Հապին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ անդրադարձավ նաեւ Հայաստանի մակրոտնտեսական ցուցանիշներին եւ դրանց վերաբերյալ ՀԲ կանխատեսումներին ու գնահատականներին:**

**Համաշխարհային բանկի կանխատեսումները Հայաստանի մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ, ըստ Ժան Միշել Հապիի, չեն փոխվել: ՀԲ կանխատեսմամբ, 2011-ին տնտեսական աճը կկազմի 4-5 տոկոս: Գնաճը, եթե չլինեն արտաքին գործոններ, ակնկալվում է, որ տարեվերջին կլինի Կենտրոնական բանկի նախանշած նպատակային ցուցանիշի մոտ: Միաժամանակ, ՀԲ ներկայացուցիչը կարեւորեց, որ գնաճի զսպման եւ կառուցվածքային բարեփոխումները հավասարակշռված լինեն:**

**Պատասխանելով կառավարության կողմից բարձր գնաճի դեպքում գների վերին շեմ սահմանելու իրավասությանը վերաբերող հարցին, Ժան Միշել Հապին ասաց, որ կարճաժամկետ հատվածում գների զսպումը կարող է դրական ազդեցություն ունենալ, իսկ երկարաժամկետ հատվածում` բացասական լինել: «Պետք է հասկանալ, թե ո՞րն է գների բարձրացման պատճառը: Եթե դա պայմանավորված է մրցակցային խնդիրներով, ապա ավելի արդյունավետ կլինի մրցակցային միջավայրը բարելավել», նշեց ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավարը, ավելացնելով, որ գների հսկողությունը հնարավոր է միայն շատ բացառիկ դեպքերում` տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի եզրակացության առկայությամբ: Ժան Միշել Հապին կարեւորեց նաեւ, որ այդ ժամանակ չվնասվի տվյալ ընկերության մրցունակությունը կամ արտադրողականությունը: Նա հրապարակեց ՀԲ կատարած ուսումնասիրության արդյունքները, ըստ որոնց, հացի, ձվի եւ կաթի գները Հայաստանում ավելի բարձր են, քան հարեւան երկրներում, իսկ շաքարավազի գինը` ավելի ցածր: Ամփոփելով խոսքը, Ժան Միշել Հապին ասաց, որ ամսական 30 տոկոս գնաճ, այդ ուսումնասիրության արդյունքներով, արձանագրվել է շատ փոքր թվով ապրանքների վրա:** Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

# Իսկ ո՞ւր են հայերի գերեզմանները

Երեւի թե կա մի սահման, որտեղ ինչ-որ ժամանակ բանականությունն ու անբանականը պետք է դեմ առ դեմ հանդիպեն: Որպեսզի նրանց տարբերությունը ճանաչվի:

Նման հնարավորություն օրերս տվեց «ԱզերԹաջ» պետական գործակալության գլխավոր տնօրենը: Առիթն այն էր, որ «ՌԻԱ-նովոստի»-ն մի լուսանկար էր տպագրել եւ ուղեկցել հակիրճ մեկնաբանությամբ. «1990 թ. հունվար. Բաքվում հուղարկավորում են բռնությունների զոհ դարձած հայերին»:

Սույն տեղեկատվությունն արդյոք շարժե՞լ էր ադրբեջանցի լրագրող-պաշտոնյայի խիղճը: Ամենեւին: Նա զայրալի նամակ է գրել ռուսաստանյան գործակալության ղեկավարությանը, որով «պարզաբանել է», որ «1990թ. հունվարի 20-ի իրադարձությունների ժամանակ, երբ Բաքու էին մտցվել ԽՍՀՄ զինված ուժերի հատուկ նշանակության ստորաբաժանումներ, զոհվածների թվում հայեր չեն եղել»: Եվ պահանջել է, որ «ՌԻԱ-նովոստի»-ն իր կայքէջից «հեռացնի ադրբեջանական ժողովրդի արժանապատվությունը խոցող ստահոդ տեղեկատվությունը»:

Պատկերացնո՞ւմ եք, մարդը պաշտոնապես «ադրբեջանական ժողովրդի արժանապատվությունը խոցող» է որակում այն տեղեկատվությունը, որն, իհարկե, իրականությանը չի համապատասխանում, բայց որը փաստորեն հերյուրվել է, որպեսզի փրկված համարվի նույն ադրբեջանական ժողովրդի խիղճը:

Այսինքն, ռուսաստանյան լրատվական գործակալությունը, գիտենալով հանդերձ, որ 1990 թ. Բաքվի ջարդերի հայ զոհերը գերեզման չեն ունեցել եւ չունեն, փորձել է ինչ-որ կերպ «սվաղել» իրողությունը եւ աշխարհին ցույց տալ, որ Ադրբեջանի այն ժամանակվա իշխանությունները այնքան գթասիրտ եւ մարդկային էին, որ պաշտոնապես հողին էին հանձնում բռնությունների զոհ հայերին:

Իսկ Ադրբեջանի պետական լրատվական գործակալության գլխավոր տնօրենը, փոխանակ երախտագիտություն հայտնելու իր ռուսաստանցի գործընկերներին, նրանց լրագրողական «ինտրիգը» համարում է «ադրբեջանական ժողովրդի արժանապատվությունը խոցող»:

Ուրեմն, իրադարձություններից երկու տասնամյակ անց էլ ադրբեջանական հանրությունը պատրաստ չէ ընկալելու, որ զոհվածները, անկախ ազգությունից եւ դավանանքից, պետք է մարդկայնորեն հողին հանձնվեն: Եվ եթե որեւէ մեկը նրան դա հուշում -ակնարկում- հասկացնում է, ապա այդ «արժանապատիվ» հանրությունը վրդովվում է. «Ինչպե՞ս կարելի է հողին հանձնել ազգությամբ հայ զոհվածներին»:

Ցավալիորեն սա է «ԱզերԹաջ»-ի գլխավոր տնօրենի ասածը:

Մինչդեռ նա «մոռանում է», որ զոհվածներն ադրբեջանական հանրության մի մասն էին, Ադրբեջանի քաղաքացիներ էին, որոնց անձնական եւ գույքային ապահովությունը պետք է երաշխավորեր ոչ այլ ոք, քան Ադրբեջանի կառավարությունը:

Դժբախտաբար, խոսելով Բաքվի կամ Ադրբեջանի որեւէ այլ քաղաքի նախկին հայության մասին, հարեւան երկրի պետական քարոզչությունը գերադասում է օգտագործել «Ադրբեջանի հացով մեծացածներ» որակումը: Բայց չէ՞ որ այդ «հացն ուտելուց» առաջ այդ մարդիկ նույն Ադրբեջանի համար հաց են վաստակել, կառուցել են, տքնել: Եվ, ցավոք, դարձել ազգայնականության զոհ:

Իհարկե, 1990թ. հունվարի 20-ի դեպքերի զոհերի թվում հայեր չկային: Չէին էլ կարող լինել: Քանի որ նրանք զոհվել էին մինչ այդ՝ շուրջ մեկ շաբաթ տեւած վայրագությունների ժամանակ:

Իսկ որտե՞ղ են նրանց գերեզմանները: Կա՞ հնարավորություն, որպեսզի զոհերի հետնորդներն այցելեն իրենց հարազատների շիրիմներին: Թե՞ ամեն ինչ հողին է հավասարեցվել: Որպեսզի սեփական նստավայրից օդանավակայան մեկնելու ճանապարհին Իլհամ Ալիեւի «բարձր» նախագահական հայացքը հանկարծ չհանդիպի մի այնպիսի «ավելորդության», որ կվկայի Բաքու քաղաքում ոչ ադրբեջանական, բայց հատկապես՝ հայազգի բնակչության երբեմնի գոյությունն ու վաստակը:

Այդ դեպքում թող բարի լինեն եւ քանդեն Բաքվի ողջ դասական կենտրոնը, որ կառուցվել է հիմնականում հայ մեծահարուստների ջանքերով:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Թուրքիայի արտաքին քաղաքականությունը՝ քննարկման սեղանին

Ստամբուլում այսօր մեկնարկում է «Թուրքիայի՝ ժամանակակից աշխարհում մասնակցության քաղաքականությունները» «Վիլթոն պարկ»-ի կոնֆերանսը՝ ոչ պաշտոնական մթնոլորտում քննարկելու Թուրքիայի արտաքին քաղաքականության վերջին տարիների օրակարգը, հատկապես Եվրոպայից դուրս երկրների հետ հարաբերությունների առումով:

Կոնֆերանսի կազմակերպիչ բրիտանական «Վիլթոն պարկ» կազմակերպությանն աջակցում է ինչպես Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը, այնպես էլ արտաքին հարցերով բրիտանական գերատեսչությունը: Սպասվում է, որ Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն հանդես կգա բացման խոսքով, որից հետո իր ողջույնի խոսքը կասի նաեւ Բրիտանիայի արտգործնախարար, պետնախարար Հաուելը:

Հանդիպմանը բավականին ներկայացուցչական կազմ է հրավիրված՝ ինչպես զեկուցողների, այնպես էլ մասնակիցների առումով: Թուրքիայի արտաքին քաղաքականության ընտրած ուղղությունների գնահատման, Թուրքիայի եւ ԵՄ ու ԱՄՆ հետ ավանդական հարաբերությունների տեսանկյունից Թուրքիայի արտաքին քաղաքականության իրականացման առնչությամբ իրենց տեսակետները կներկայացնեն թուրքական եւ եվրոպական հետազոտական կենտրոնների առաջատար մասնագետները, Թուրքիայի կառավարության տարբեր ներկայացուցիչները, Բրյուսելից, Վարշավայից, Նյու Յորքից, Սոֆիայից ժամանած ուսումնասիրողներ ու վերլուծաբաններ:

Հայաստանից նշված միջոցառմանը մասնակցելու հրավեր էին ստացել Ազգային ժողովում ՀՅԴ խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանը եւ «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանը: Ինչպես հրապարակվել էր մամուլում, Վահան Հովհաննիսյանը հրաժարվել է մասնակցել կոնֆերանսին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում Թուրքիայի ունեցած դիրքորոշման պատճառով:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Մարի Յովանովիչը՝ համակարծիք Մեթյու Բրայզայի հետ

*1-ին էջից*

Ընդ որում, հենց դրանցով էլ առաջնորդվելով, ԱՄՆ-ը Հայաստանի «քաղաքացիական հասարակությանն աջակցում է ոչ թե որոշ ուժերի, այլ՝ սկզբունքների կտրվածքով»:

Ինչ վերաբերում է ղարաբաղյան խնդրին, ապա այս հարցում ԱՄՆ-ի դիրքորոշումը, որը նաեւ ՆԱՏՕ-ի մոտեցումն է, մնում է նույնը, որ ԼՂ հարցը պետք է լուծվի ԵԱՀԿ կառույցի շրջանակներում, որի ներքո էլ ընթանում է ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացը: «Կարեւոր է հասնել բանակցված կարգավորման, ապահովելով այնպիսի առաջընթաց, որ միջադեպեր տեղի չունենան», նկատի ունենալով շփման գծում տեղի ունեցած դեպքերը՝ ասաց Մարի Յովանովիչը:

Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունների ու հնարավոր պատերազմի մասով Հայաստանում ԱՄՆ դեսպանը ընդգծեց. «Միայն քաղաքական բանակցություններն են կարգավորման հասնելու ճանապարհը, իսկ ռազմական լուծումն այլընտրանք չէ»:

Հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գործընթացն էլ, ըստ ամերիկացի դիվանագետի, ԱՄՆ-ի օրակարգից դուրս չէ: «Ինչ-որ պահի, ինչ-որ տեղ, բայց հայ-թուրքական հարաբերությունները պետք է նորմալանան, սահմանը պետք է բացվի», երեկ ասաց Յովանովիչը, ավելացնելով, որ ԱՄՆ-ը կարեւորում է հայ-թուրքական համատեղ փոխանակման ծրագրերը:

Յովանովիչը որեւէ կերպ չնշեց, թե կոնկրետ ինչ է նախատեսում Միացյալ Նահանգները հայ-թուրքական գործընթացը տեղից շարժելու առնչությամբ, հատկապես, երբ այդ հարցում որեւէ քայլ անելու հերթը Թուրքիայինն է: Նման մի իրավիճակ էլ կապված է դիպուկահարներին հայ-ադրբեջանական շփման գծից հեռացնելու խնդրին, որին թեեւ Հայաստանը դրական է արձագանքում, բայց ամերիկյան եւ այլ պաշտոնյաներ ամեն առիթով, չգիտես ինչու, երկու կողմերին են «խրախուսում քայլեր ձեռնարկել»:

Դրա փոխարեն Մարի Յովանովիչը համակարծություն հայտնեց Ադրբեջանում իր գործընկեր Մեթյու Բրայզայի հետ առ այն, որ Լեռնային Ղարաբաղ թռչելիք քաղաքացիական ավիացիայի ինքնաթիռները ռմբակոծելու ադրբեջանական սպառնալիքները «բացարձակապես անընդունելի են եւ չեն բխում բանակցությունների այն սկզբունքներից, որոնց պետք է հետամուտ լինի Ադրբեջանը»:



# Բարեփոխումներից հետո կունենա՞նք իդեալական ոստիկան

**ՀՀ ոստիկանապետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Արթուր Օսիկյանը երեկ հանդիպեց լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ ու ամփոփ ներկայացրեց ոստիկանության գործունեության ոլորտում բարեփոխումների ծրագիրը: Ծրագրում հաշվի են առնված ՀՀ-ում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրով եւ մեր հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-202 թթ. ծրագրով նախատեսված առանձին ուղղությունները: Ինչպես ասաց գնդապետը՝ ծրագրի հաջող իրականացման ամբողջացված վերջնարդյունքը պետք է լինի այն, որ քաղաքացիները զգան իրենց ավելի անվտանգ եւ վստահեն ոստիկանությանը: «Այսօր հասարակությունը եւ պետությունը բարեփոխված ոստիկանության, ժամանակակից ծրագրերով եւ մեթոդներով կրթված ոստիկանների կարիք ունեն. ակնհայտ է, որ այսօրվա ոստիկանության կարողությունները օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով չեն կարող ամբողջությամբ գնահատվել այդպիսին: Անհրաժեշտ է մի կողմից ոստիկանության համակարգ ներգրավել նոր՝ ոստիկանի մասնագիտություն ստացած անձանց, եւ մյուս կողմից՝ վերապատրաստել ծառայության մեջ գտնվողներին եւ միաժամանակ անցկացնել լուրջ եւ խստապահանջ ատեստավորման գործընթաց, համակարգը «մաքրելով» ոչ արհեստավարժ եւ անաչառ ծառայողներից»: Պրն Օսիկյանը նշեց, որ բարեփոխումների ծրագիրն ունի 11 ուղղություններ՝ կառուցվածքային, կրթական, ճանապարհային երթեւեկության անվտանգության, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների պաշտպանությանն ուղղված, անձնագրային խնդիրների հետ կապված, թրաֆիկինգի եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետ բարձրացման, կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, փողերի լվացման, կիբեռհանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, ոստիկանության նկատմամբ վստահության բարձրացման, ոստիկանների սոցիալական եւ իրավական պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ: Բարեփոխումներն իրականացվում են եվրոպական եւ միջազգային մի շարք կառույցների հետ համագործակցված: Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում կլինեն ավելորդ հաստիքների կրճատում եւ նույն գործառույթներն իրականացնող ստորաբաժանումների փակում:**

**«Ազգի» հարցին պատասխանելով պրն Օսիկյանն ասաց, որ արդեն կրճատվել է քրեական հետախուզության գլխավոր վարչության համապատասխան ստորաբաժանումը, եւ գործառույթները փոխանցվել են կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությանը: Ներդրվել է քաղաքացիական հատուկ ծառայությունը, որի աշխատակիցները չեն կրում հատուկ համազգեստ: Համակարգում սպասվում է 7 տոկոս աշխատողների կրճատում: Արդեն լուծարվել է ու կրճատվել տրանսպորտային վարչությունն իր 300 աշխատողներով եւ դեռ համապատասխան մասնագիտական փորձությունը չհաղթահարողները՝ անկախ տարիքից ու զբաղեցրած պաշտոնից, կազատվեն համակարգից, ու նրանց կփոխարինեն իրենց պարտականությունները չզլացող եւ հստակ կատարող կադրերով: Ուր էր, թե այդպես լիներ, ու ժողովուրդը դեմքով շրջվեր դեպի ոստիկանը ու վստահեր նրան, ավա՜ղ...:**

**Բարեփոխումների շարքում կստեղծվի օպերատիվ կառավարման կենտրոն, հագեցած ամենավերջին սարքավորումներով, որտեղ հնչած ահազանգը կֆիքսվի, ու շրջիկ մեքենաները դեպի վայր կհասնեն շատ կարճ ժամկետում: Ծրագրում կա նաեւ կարեւոր կետ, թե ինչպիսի հատուկ միջոցներ կարող է օգտագործել ոստիկանը՝ արցունքաբեր գազ, ձեռնաշղթաներ, մահակներ եւ այլն, իսկ դրանք օգտագործելու համար պետք է լինի առողջապահության նախարարության եզրակացությունը, որ դրանք չեն վնասում մարդկանց առողջությանը: Մի խոսքով, եթե բարեփոխումների ծրագրում ներառված կետերը, գործառույթները իրականացվեն, ապա մենք կունենանք լիարժեք ոստիկաններ, իսկ մինչ այդ, ինչպես ասաց պրն Օսիկյանը՝ «Մենք իդեալական ոստիկան ունենալուց հեռու ենք եւ ձգտում ենք դրան հասնել»:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Թմրամոլությունը հնարավոր է բուժել նույնիսկ 24 ժամում

**Վիճակագրության համաձայն, Հայաստանում գրանցված են 2751 թմրամոլներ, որոնցից 1472 հոգին մայրաքաղաքից են: Իսկ 1472 հոգուց 37-ը կանայք են: Սրանք առողջապահության նախարարության նարկոլոգիական ծառայության գրանցած տվյալներն են: Իհարկե, թմրամոլների իրական թիվն այլ կլինի, քանի որ վերոնշյալ թվերը վերաբերում են միայն նրանց, որոնք դիմել են բուժման համար: Կան թմրամոլներ, որոնք ո՛չ դիմել են բուժման համար, ո՛չ էլ գրանցված են, հետեւապես իրական թիվը ավելին կլինի: Երեկ «Հենարան» ակումբում ԱՆ գլխավոր թմրաբան Պետրոս Սեմերճյանը տեղեկացրեց, որ նախարարությունը տրամադրում է բուժական ու վերականգնողական օգնություն նրանց, որոնք դիմում են բուժման համար: Իսկ բուժումը թմրամոլի կամքին հակառակ չի լինում, թեեւ կան հարկադիր բուժվողներ, բայց նրանց թիվը քիչ է՝ տարեկան 7-8 հոգի: Մյուսները բուժման համար դիմում են կամավոր: Պետրոս Սեմերճյանի փոխանցմամբ՝ թմրամոլների թիվն ավելացել է, բայց դա պայմանավորված է այն հանգամանքով, որ բուժման համար սկսել են ավելի շատ դիմել: Այսինքն՝ իրականում ավելացել է դիմողների ու գրանցվածների թիվը:**

**Հայկական հոգեբուժական ասոցիացիայի նախագահ Արմեն Սողոյանը հավելեց, որ դիմողների թիվն ավելացել է, քանի որ թմրամոլությունն ապաքրեականացվել է. «Հոգեկան հիվանդությունների դեպքում էլ իրական հիվանդներն ավելի շատ են, քան գրանցված ու բուժվող հիվանդները»: Եթե փոխվի մարդկանց վերաբերմունքը հոգեկան հիվանդների հանդեպ, եւ հոգեկան հիվանդությամբ տառապող հարազատ ունենալը չլինի ամոթալի երեւույթ, ապա, անկասկած, կավելանա բուժվողների թիվը: Հայաստանում հաշվառված են հոգեկան խանգարումներ ունեցող 44 հազար քաղաքացիներ:**

**Այնուհետեւ կրկին անդրադառնալով թմրամոլությանը՝ պարոն Սեմերճյանը նշեց, որ ներկայիս մեթոդիկաները հնարավորություն են տալիս ազատվելու կախվածությունից: Իսկ ովքեր բուժումից հետո վերադառնում են թմրամոլությանը, դա արդեն պայմանավորված է ոչ թե բուժման որակով, այլ ուրիշ հանգամանքներով: Հայաստանի քաղաքացիների համար թմրամոլությունից բուժումը, բացի մի թանկարժեք մեթոդիկայից, իրականացվում է պետպատվերի շրջանակներում: Բուժումը տեւում է միջինը 15-25 օր՝ կախված հիվանդի առողջական վիճակից:**

**Ինչ վերաբերում է վերոնշյալ թանկարժեք մեթոդիկային, դրա արժեքն ամբողջությամբ դեռ որոշված չէ, սակայն, Պետրոս Սեմերճյանի փոխանցմամբ, միայն ծախսվող նյութի գինը կազմում է 700-800 հազար դրամ: Այդ մեթոդիկայով նախատեսվում է թմրամիջոցներից կախվածությունը բուժել 24 ժամվա ընթացքում: Սա աշխարհում տարածված մեթոդիկա չէ, կիրառվում է միայն Միացյալ Նահանգներում ու Իսրայելում, ըստ Պ. Սեմերճյանի, հաջորդը փաստորեն լինում է Հայաստանը:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍՆԵՐ

# Պայքար՝ արեւի տակ տեղ գտնելու համար

Ներքաղաքական վերջին երկու շաբաթվա զարգացումները փաստում են, որ սկսվել է պայքար՝ արեւի տակ փոքրիկ տեղ պահելու կամ էլ ունեցածը չկորցնելու համար: Օրինակ, ՀՀԿ-ն ու ՀԱԿ-ը պայմանավորվում են, որ խորհրդարանական ընդդիմադիր «Ժառանգություն» կուսակցությանը հասկացնեն՝ քո ժամանակը սպառվել է: Իշխանական կոալիցիայի մաս կազմող ԲՀԿ-ն ու ՕԵԿ-ն ընդհանրապես դուրս են զարգացող իրադարձություններից, ՀՅԴ-ն երբեմն ինչ-որ հայտարարություններ անում է, սակայն արմատական որեւէ քննադատություն եւ պահանջ իշխանության առջեւ չի դնում:

Որ ՀՀԿ-ն ու ՀԱԿ-ը գոնե «Ժառանգության» վերաբերյալ պայմանավորվածություն են ձեռք բերել, **Րաֆֆի Հովհաննիսյանին** չի ստիպում հիասթափվել ու ձեռքերը ծալել: Վերջինս շարունակում է հացադուլը Ազատության հրապարակում՝ այդ կերպ ձեռք բերելով բազմաթիվ համակիրներ:

**Տիգրան Կարապետյանի** երեկվա ասուլիսի ժամանակ ակնհայտ դարձավ, որ 2012-ի խորհրդարանական ընտրություններից ակնկալիք ունի նաեւ Ժողովրդական կուսակցությունը: Պայքարն ըստ Կարապետիչի, նոր երանգ է ստանում ու շարունակվելու է ավելի լայն թափով, որովհետեւ «մեզ ուզում են դուրս բերել դաշտից ու մենաշնորհել դաշտը»: Դաշտում մնալու ու արեւի տակ մի փոքրիկ տեղ գտնելու նպատակով մշտապես Րաֆֆի Հովհաննիսյանին քննադատող Կարապետիչն այժմ դարձել է «Ժառանգության» թիվ մեկ դաշնակիցը: Նախ Մատենադարանում տեղի ունեցած հանրահավաքից հետո Կարապետիչն ու իր համակիրները եկան Ազատության հրապարակ՝ ողջունելու եւ սատարելու Հովհաննիսյանին, իսկ երեկ ԺԿ նախագահը չբացառեց «Ժառանգության» հետ համագործակցությունը: ԺԿ-ում այդ ցանկությունը կա, «Ժառանգությունում» դեռ հայտնի չէ. վերջին ասուլիսի ժամանակ Րաֆֆի Հովհաննիսյանն ասաց, որ ՀԱԿ-ի հետ համագործակցության եզր տեսնում է:

Տիգրան Կարապետիչի գնահատմամբ՝ Րաֆֆի Հովհաննիսյանի հացադուլը խիզախ քայլ է: Հենց հացադուլի որոշում կայացնելն էր պատճառը, որ Կարապետիչն իր վերաբերմունքը փոխեց: Մինչ այդ Կարապետյանը կարծել է, որ Րաֆֆի Հովհաննիսյանը արեւմտյան գաղափարներ կրող է, բայց վերջին մեկ շաբաթվա ընթացքում պարզել է, որ «Հովհաննիսյանն այսօր հայ է»: ԺԿ նախագահի գնահատմամբ՝ ՀԱԿ-ում դիրքորոշումներն ու մոտեցումները փոխվել են: Արմատականներն այլեւս արմատական հայտարարություններ չեն անում, ժողովրդին հանգստացնում են ու պահանջում վստահել առաջնորդին, որը առանց շտապելու շախմատ է խաղում:

Թեպետ ՀԱԿ-ը հայտարարում է, որ իր օրակարգում շարունակում է թիվ մեկ պահանջը մնալ Սերժ Սարգսյանի հրաժարականն ու իշխանափոխությունը, սակայն դրանք մնում են ընդամենը խոսքեր, այն էլ ոչ թե հանրահավաքների ժամանակ՝ բազմության առաջ, այլ ասուլիսների ժամանակ: Ընդհակառակը, հանրահավաքների ժամանակ թե՛ ՀԱԿ առաջնորդը, թե՛ մնացած ընդդիմադիր քաղաքական գործիչները հիմա իշխանափոխություն պահանջող հանրությանը հանգստացնում են խոսքերով, որ ընդդիմությունը շախմատ է խաղում եւ չպետք է շտապի:

«Դիրքորոշման մեղմացում չկա»: Սա էլ ՀԱԿ-ի համակարգող **Լեւոն Զուրաբյանի** տեսակետն է: Գնում են երկխոսության, որը լուծելու է հարցեր ոչ թե իշխանության, այլ ժողովրդի համար: ՀԱԿ-ում աննպատակահարմար են համարում որեւէ ընդդիմադիր ուժի հետ բանավեճի մեջ մտնելը: Թիրախը իշխանություններն են: Լեւոն Զուրաբյանը համոզված է, որ ընդդիմությունը կարելի է միավորված համարել: «Բոլոր ուժերը, ովքեր կարծում են, որ Սերժ Սարգսյանը պետք է հեռանա, արդեն միավորվել են, ովքեր նոր են այդպես մտածում, դռները բաց են»: Զուրաբյանի գնահատմամբ՝ ընդդիմադիր ուժերի նպատակը մեկն է, պարզապես պայքարի ձեւերն են տարբեր. «Մեկը՝ հարյուրհազարանոց միտինգով, մյուսը՝ ծոմապահությամբ, երրորդն էլ՝ կարմիր քարտով»:

«Եթե որեւէ մարդ ցանկանում է, որ հանրությունը ընկալի իր ակցիան որպես քաղաքական հացադուլ, ինքն ընդամենը մեկ մոգական ֆրազ պետք է արտասանի, ասի, սա է իմ պահանջը, ես հացադուլը կդադարեցնեմ միայն այն ժամանակ, երբ պահանջը կատարվի»:

«Հովհաննիսյանի հացադուլը ցուցադրական չէ», համոզված է ՀՀԿ-ական **Մանվել Բադեյանը**: Իշխող կուսակցության ներկայացուցիչը կարծում է, որ հարցերը պետք է բարձրացնել ԱԺ ամբիոնից: «Իսկ եթե հացադուլի է դիմում, ապա ժողովրդին իր ձայնը լսելի դարձնելու այլ տարբերակ չունի»: Բադեյանը դատապարտեց, որ ոստիկաններն արգելել են անձրեւին ու ցրտին վրան տեղադրել Ազատության հրապարակում: «Այո, ծանր է երկրի վիճակը, փոփոխություններ է պետք կատարել, ո՞վ չի ընդունում դա, բայց ի՞նչ մի ծայրահեղ վիճակ է, որ դիմել է հացադուլի: Երկուսն էլ՝ վրան թույլ չտալն ու հացադուլը, մառազմ է»:

«Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ **Ռուբեն Հակոբյանի** մեկնաբանությամբ էլ վրան տեղադրելու արգելքը իշխանությունների իրական բարոյական եւ քաղաքական նկարագրի պատկերն է ցույց տալիս: Հակոբյանի գնահատմամբ՝ Ազգային ժողովը կրիմինալի ղեկավարման կոորդինացիոն հիմնական կենտրոնն է: «Նման կրիմինալ հակապառլամենտական պառլամենտ դեռեւս չի ունեցել Հայաստանը»: Հետեւաբար Հակոբյանը կարծում է, որ նման խորհրդարանում անհնար է հայտարարություններ կատարել:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԵԼԻՈՖԻԿԱՅԻՆ

# Հայկական բիզնեսի նոր ձեւ

«Տվեք ինձ հնարավորություն հելիոֆիկացնելու մեկ հայկական գյուղ եւ ես կհելիոֆիկացնեմ ամբողջ աշխարհը», գիտությունների դոկտոր Վահան Համազասպյանը շուրջ քսան տարի այս կարգախոսով ուսումնասիրում է արեւի էներգիան: Երեկ Գիտությունների ազգային ակադեմիայում գիտնականը հիմնականում ֆիզիկոս գործընկերներին ներկայացրեց իր երկարամյա գործունեության արդյունքը. արեւի էներգիան արդյունաբերության տարբեր ոլորտներում եւ կենցաղային հարցերում օգտագործումը ապահովող սարքը, ինչը, Համազասպյանի խոսքերով, կարող է դառնալ «հայկական բիզնեսի նոր ձեւ»:

Նախ գիտխորհրդի անդամները հարգեցին Ճապոնիայում երկրաշարժից եւ ատոմակայանի վթարից զոհվածների հիշատակը, այնուհետեւ Համազասպյանը, հենց ճապոնական աղետի համայնապատկերում նկատեց, որ ժամանակակից աշխարհի այսօրվա էներգետիկ աղբյուրները հեռանկար չունեն: «Հաշվարկները ցույց են տալիս, որ այժմյան էներգետիկ պաշարները սպառվում են, իսկ մինչ այդ երկրագնդին սպասում է էկոլոգիական աղետ. ընդհանուր ջերմաստիճանի փոփոխություն, ծովի մակերեւույթի բարձրացում», ասաց Համազասպյանը: Գիտնականը նկատեց, որ ընդհանուր խնդիրներից բացի Հայաստանն ունի իր յուրահատուկ խնդիրները էներգետիկ ոլորտում: Որպես այդպիսին Համազասպյանը տեսնում է մեր երկրի՝ առաջին հերթին էներգետիկ առումով շրջափակումը. «Այս հանգամանքը հենց ապացուցում է, որ Հայաստանը պետք է փնտրի եւ գտնի էներգիա ստանալու այլընտրանքային միջոցները, եւ քանի որ մենք չունենք նման աղբյուրներ, պետք է հիմքը դնենք սեփական գիտելիքների վրա», նշեց Համազասպյանը՝ հավելելով, որ Հայաստանի համար էներգետիկ աղբյուրի այլընտրանք կարող են լինել հենց իրենց՝ արեւի էներգիան օգտագործող սարքերը: «Մենք պետք է Հայաստանում ստեղծենք այդ սարքերը, դրանց գործարանները, այնուհետեւ դուրս գանք միջազգային շուկա եւ գրավենք այնտեղ մոնոպոլ դիրք», նշեց գիտնականը: Ըստ որում արեւի էներգիան օգտագործող սարքերը կարելի է օգտագործել նաեւ սննդամթերք պատրաստելու համար: ԳԱԱ-ի առաջին հարկում նույնիսկ ներկայացվել էին «հայկական արեւային քաղցրավենիքներ», որոնք պատրաստված են հենց սարքի միջոցով: Այս առումով նույնպես Համազասպյանը տեսնում է միջազգային շուկա դուրս գալու հնարավորություն՝ հատկապես հայկական համայնքներում «արեւի էներգիայով պատրաստված արեւելյան քաղցրավենիքը, կունենա մեծ պահանջարկ», վստահեցրեց գիտնականը: Գիտնականը առաջարկեց ԳԱԱ-ի ֆիզիկոսներին իրենց մասնագիտական կարծիքը հայտնել, թե արդյոք իրենց պատրաստած սննդամթերքը էկոլոգիապես մաքո՞ւր է: «Մենք ցանկանում ենք սկզբից պարզել այս հարցը, նոր, եթե անվնաս է, շարունակել գործունեությունը», ասաց Համազասպյանը: Գիտնականը նաեւ նշեց, որ իրենց սարքերով հատկապես գյուղական համայնքների բնակիչներին առաջարկում են անցում կատարել բաշխված էներգիայի մատակարարման, երբ ամեն ընտանիք, ունենալով սարքը, կստանա անհրաժեշտ էներգիան:



Գիտաժողովի վերջում գիտնականներն առաջարկեցին Համազասպյանին՝ «գրավոր կարգով» ներկայացնել իր առաջարկները, որպեսզի դրանք մասնագիտական գնահատական ստանան եւ, անհրաժեշտության պարագայում, արժանանան Գիտությունների ազգային ակադեմիայի աջակցությանը:

Հ. Ա.

# Խճանկարային տրամադրություններ

Եվրոպական նորությունների հեռուստաալիքները հեղեղել են մեր գիտակցությունը համաշխարհային աղետների լուրերով: Տպավորություն է, թե ողջ մոլորակը աղետի գոտու է վերածվել: Եվ դա այդպես էլ է: Մարդը իր սեփական բնակարանը սառնասրտորեն թալանում կամ, որպես օտարածին էակ, ինտրվենցիայի է ենթարկում: Արաբական աշխարհի մակընթացությունները կամա-ակամա ալիքվում են մեր ենթագիտակցության մեջ. սոցիալական աղետը համաճարակի է վերածվում: Անգամ ամենազարգացած գերտերությունը, ամենաառաջադիմական հասարակությունը ապահովագրված չեն. մեր աչքի առաջ է ճապոնական մեծ ողբերգությունը՝ եռակի արհավիրք միանգամից. ավանդապահ մշակույթով ու գերզարգացած քաղաքակրթությամբ միմիայն հարգանքի արժանի ժողովրդի հանդեպ, սոսկալի էր բնության ամեհի ուժը: Ճապոնական ողբերգությունն ամենացնցողն է վերջին աղետներից: Եվ նույնքան ցնցող վշտի զսպվածության եւ արժանապատվության ճապոնական դրսեւորումը:

Բնական ու սոցիալական աղետներից առաջ ամենավտանգավոր աղետը սակայն մարդու հոգեկան աշխարհում տեղի ունեցողն է: Աշխարհի, երեւույթների հանդեպ նրա վերաբերմունքների ծայրահեղությունը, կեղծ, անցողիկ արժեքների ֆետիշացումը, բնական հավասարակշռության օրենքի խախտումը: Եվ միայն մեծ արհավիրքների առաջ է նա խեղճանում, խուճապահար լինում ու փորձում վերանայել իր հայացքները: Սակայն, հիշողությունը, ավա՜ղ, կարճ է: Ու նորից մոլորակի մարմինը նա պատում է պատերազմի վերքերով, սովի կնճիռներով:

Աշխարհի խճանկարի բազմազանության մեջ երեւույթները երբեմն անընկալելի են, ծայրահեղ հակասականությամբ անհամոզիչ: Ու երբ մինչեւ հոգուդ խորքը ցնցում են թաիլանդցի արտիստների փողոցային շրջիկ ներկայացման պարող փղերը՝ կնճիթներից կախ գանձանակներով, ճակատներին կարմիր խաչի դաջվածքով ու «Help Japan» գրությամբ, եւ կամ զարմանքով հետեւում ես գերմանացիների վերաբերմունքին, նրանց հուզմունքին, մոմավառությանն ու ցավակցական գրություններին սիրելի Կնուտ արջի մահվան համար, հայացքդ միանգամից, կտրուկ տեղափոխում են Լիբիայի վիրավոր երկնքի սարսափին, որից շատ բնակիչներ արդեն փախել են լեռները՝ ապաստանելու քարայրերում: Հետո վերադառնում ես ու նորից՝ ահա աշխարհի քո անկյունը՝ քո հոգսը գրկած:

Զրուցում եմ տարեց մի կնոջ հետ: Իր ցավերը մոռացած այս կինը Գյումրու երկրաշարժից տուժած մի ընտանիքի մասին է պատմում: 1988-ից դեռ տնակում ապրող ընտանիքի չորս երեխաներից փոքրը նորածին է, մայրը չի կարող նրան կրծքով կերակրել, որովհետեւ քաղցած է մնում, իսկ գիշերներն էլ չի քնում, որովհետեւ երեխաներին է հսկում տանը վխտացող առնետներից: Զրուցակիցս թոշակների հետ կապված խայտառակ պատմությունն է հիշեցնում, թե ինչպես տարիներ շարունակ սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից մահացած մարդկանց թոշակ է նշանակվել, եւ միլիոններ են գրպանվել: Իսկ ինքը 40 տարվա աշխատանքային ստաժով ընդամենը 25.000 դրամ է ստանում: Միայնակ թոշակառուի հերթական անպատիվ եւս մեկ ծերություն. ձմռանը ցերեկները վառարանն անջատում, լավ եղանակին օրն անց է կացնում մոտակա այգում, երեկոյան միայն տուն դառնալիս՝ մի քանի ժամով վառարանը միացնում է: Սակայն խորին արժանապատվությամբ է խոսում ազգային եւ հասարակական երեւույթների մասին, սաստիկ կարեկցում գյումրեցի բազմազավակ մորը, որ նման պայմաններում չորս երեխա է մեծացնում, երեքը՝ տղա: «Նրանք վաղվա մեր բանակայիններն են, չէ՞, գոնե այդ տեսանկյունից վերաբերվեն այս ընտանիքին, մեր իշխանավորները մի փոքր եթե պետականորեն մտածեի՜ն»: Ամենափնտրվածը մեր իրականության, մեր հասարակության մեջ. համընդհանուր անձնապաշտության ու նյութամոլության պայմաններում մեզանում ոչ թե պետական կամ ազգային մտածողությունն է պակասում, այլ պարզ-մարդկային վերաբերմունքն է վերանում: Այստեղ պետք է հիշատակեմ բարեկամներիցս մեկի՝ վերջերս զարմանքով ու հուսահատությամբ ասված խոսքը, թե ազնվությունը բեռ է դարձել, կյանքը խոչընդոտող բեռ:

Ս. Բ.

# «Եթե ղեկավարները մտածում են ժողովրդի մասին, երկիրը բարգավաճում է»

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ Ռուսաստան կատարելիք պաշտոնական այցի նախօրեին տեղի ունեցավ միջադեպ, որը տագնապահար արեց թուրքերին: Ստամբուլում անցկացվող «Բարեփոխումների լիդերները» գագաթաժողովում ԱՄՆ-ի նախկին փոխնախագահ եւ «համատեղության կարգով» Նոբելյան մրցանակի դափնեկիր Ալբերտ Գորը ցուցադրեց բնապահպանական սլայդշոու, որում արդեն 2090 թվականին Թուրքիան կլիմայական բարեփոխումների հետեւանքով վերածված է համատարած անապատի...

Մեզ հայտնի չէ, թե ինչպիսին կլինի Թուրքիան 80 տարի հետո: Փոխարենը հայտնի է, դուր է գալիս դա մեզ, թե ոչ, ժամանակակից Թուրքիան տնտեսապես ու քաղաքականապես դինամիկ զարգացող պետություն է եւ ստիպում է իր հետ հաշվի նստել նաեւ համաշխարհային գործերում: Համենայն դեպս, Մոսկվայում անցկացված ռուս-թուրքական բանակցություններում ռուսները հատկապես էներգետիկայի հարցերում չէին կարող անտեսել գործընկերոջ իրական ճնշման լծակները:

Հայաստանում էլ լավ գիտեն, որ ռուս-թուրքական առեւտրատնտեսական համագործակցությունն արդեն տեւական ժամանակ մեծ վերելք է ապրում եւ նշագծված 100 միլիարդ դոլարի սահմանագիծն ամենայն հավանականությամբ առաջիկայում կհատվի: Իզուր են մեր երկրում նեղսրտում, թե մեր ռազմավարական դաշնակիցը սերտ առնչությունների մեջ է մեր ոխերիմ թշնամու հետ: Եկամտաբեր միլիարդավոր դոլարների ֆոնի վրա դաշնակից լինելու պարագան կարող է պայմանական դառնալ: Այդպիսին է մեծ քաղաքականությունը, եւ պետք չէ դրանում մեղադրել Ռուսաստանին:

Սակայն այդ մասին չէ, որ կուզենայինք խոսել: Թերեւս ավելի ճիշտ կլինի ուշադրության առնել այն իրողությունը, թե ինչպես միջնադարյան բազմացեղաստան Թուրքիային հաջողվեց մի քանի տասնամյակի ընթացքում հասնել մի մակարդակի, երբ երկիրն իրեն համարում է բոլոր առումներով շատ ավելի դեմոկրատական ու քաղաքակիրթ, քան նույնիսկ Եվրոմիության մի շարք պետություններ: Մոսկովյան այցի նախօրեին Էրդողանը ընդարձակ հարցազրույց էր ունեցել ռուսաստանյան մի քանի լրատվամիջոցների համար: «ԵՄ 27 անդամների մի մասի համեմատ Թուրքիան ավելի լավ վիճակում է, հայտարարում է վարչապետը: Եվրոմիությանն անդամագրվելու թեման արդեն հիսնամյա պատմություն ունի, մինչդեռ նրա մեջ մտնող որոշ երկրների հետ փոխհարաբերությունները սոսկ 4-5 տարի են ընդգրկում: Եվրոպայում ու առաջին հերթին Գերմանիայում բնակվող մեր քաղաքացիներն արդեն 5 միլիոնի են հասել: Եթե նույնիսկ մեզ չընդունեն, մենք արդեն Եվրոմիությունում ենք»:

Բայց սա էլ կարեւոր չէ: Անկարելի է անտեսել այն փաստը, որ Թուրքիայում պարբերաբար իշխանության գլուխ են գալիս անհատականություններ, որոնք դառնալով լիդեր, հսկայական դեր են խաղում երկրի վերընթաց զարգացման ասպարեզում: Ահա թե հիշյալ հարցազրույցում ինչ է ասում այն նույն Էրդողանը:

«Երբ մենք հանձն առանք իշխանությունը, տարեկան ազգային եկամուտը հավասար էր 230 մլրդ դոլարի: Ներկա պահին 730 միլիարդ է: Սղաճը կազմում էր 30 տոկոս, անցած ամսին եղել է 4.2 տոկոս: 8 տարի առաջ Թուրքիայի արտահանությունը տարեկան 30 մլրդ դոլարի մակարդակին էր, ներկայումս, նույնիսկ ճգնաժամի պայմաններում, հասել է 114 մլրդ դոլարի: Այն ժամանակ մեր պարտքը Արժույթի միջազգային հիմնադրամին 23,5 մլրդ դոլար էր, իսկ այսօր իջել է մինչեւ 5,5 միլիարդի: Այս ամենը ցույց է տալիս, թե ինչպես է զարգացել Թուրքիան վերջին տարիներին»:

Իրոք զարգացել ու շարունակում է զարգանալ: Էրդողանի այցի վերաբերյալ մեկնաբանություններում ռուսաստանյան շատ լրատվամիջոցներ հատուկ առանձնացնում էին առհասարակ թուրքական դիվանագիտության ճկուն պրագմատիզմը, դրա շարժիչ ուժը համարելով ազգային-պետական շահերի համառ պաշտպանությունը թուրք լիդերների կողմից: Սրանք Քադդաֆի չեն, որի շահագրգռությունները գերազանցապես անձնական են, կլանային, իշխանասիրական: Կառուցվածքային, գաղափարական, բարոյական ի՞նչ փոփոխություններ են կատարվում ներկայումս Հայաստանում ինչ-որ պատմական խնդիրներ լուծելու համար: Թուրքիան հզորանում է, մենք ճահճակալում ենք:

Թերեւս այս մասին պետք է մտածել եւ ոչ թե չարությամբ նայել, սխալ դեպքում, ռուս-թուրքական հարաբերությունների մասշտաբայնությանը, կարգախոս դարձնելով «ռուսները մեզ հերթական անգամ խաբեցին» տխրահռչակ արտահայտությունը:

Տեղին է հիշել մեծն Մաքիավելլուն, ցավոք, Թուրքիայի առնչությամբ. «Եթե ղեկավարները մտածում են ժողովրդի մասին, երկիրը բարգավաճում է»:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# Պատժամիջոցներ Լիբիայի նավթային 14 ֆիրմաների դեմ

## *Քադդաֆի. «Լիբիան «ամեն գնով» կհաղթի»*

ԱՄՆ ֆինանսների նախարարություն պատժամիջոցներ է ձեռնարկել Լիբիայի պետական նավթային կորպորացիային ենթակա 14 ֆիրմաների դեմ: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ ԱՄՆ քաղաքացիներին եւ կազմակերպություններին այսուհետեւ արգելվում է գործ ունենալ լիբիական այդ ֆիրմաների հետ: Ձեռնարկման պատճառն այն երկյուղներն են, թե նավթի վաճառքից ստացվող եկամուտները կարող են հատկացվել Մուամմար Քադդաֆիի մարտական ստորաբաժանումների ֆինանսավորմանը:



Ավելի վաղ՝ փետրվարի 28-ին ԱՄՆ-ը Լիբիայի բարձրագույն ղեկավարության հաշիվներում սառեցրել էր մոտ 30 մլրդ դոլար: Այդ ժամանակ Լիբիայում բազմամարդ ցույցերի մասնակիցները պահանջում էին Քադդաֆիի եւ նրա կառավարության հրաժարականները: Ավելի ուշ ժողովրդական հուզումները վերաճեցին քաղաքացիական պատերազմի եւ հանգեցրին ՆԱՏՕ-ի ռազմական միջամտությանը:

Լիբիայի պետական հեռուստատեսությունը մարտի լույս 23-ի գիշերը ցուցադրել է Մուամմար Քադդաֆիի կարճատեւ՝ 3-րոպեանոց ելույթը: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ Քադդաֆին իր կողմնակիցներին դիմել է Տրիպոլիի իր նստավայրի շենքերից մեկի պատշգամբից: Նա հայտարարել է, թե Լիբիան «ամեն գնով» հաղթելու է «իսլամի դեմ խաչակրաց արշավանք» սկսած երկրներին եւ երկրի ներսում ջախջախելու է վարչակարգի հակառակորդներին:

Քադդաֆիի խոսքերով, Լիբիայի վրա հարձակվել են «մի խումբ ֆաշիստներ», որոնք ի վերջո հայտնվելու են «պատմության աղբանոցում»:

Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ի ռազմական գործողությանը, երեկ առավոտյան Տրիպոլիում որոտացել է 6 պայթյուն: Նախօրեին կոալիցիայի ուժերը ամերիկյան եւ բրիտանական սուզանավերից 20 «Թոմահավկ» հրթիռ էին արձակել ռազմավարական օբյեկտների վրա: Շաբաթավերջին Լիբիայի դեմ ձեռնարկված ռազմարշավի ընթացքում արդեն արձակվել է 162 թեւավոր հրթիռ, միայն մարտի 22-ին կատարվել է 336 մարտական թռիչք եւ հասցվել 108 օդային հարված, նշում է BBC-ն:

Ինչ վերաբերում է ապստամբներին, նրանք չեն շտապում օգտվել իրավիճակից եւ լայնածավալ հարձակում սկսել Քադդաֆիի զորքերի դեմ: Ընդդիմության ղեկավարությունը ապստամբների գլխավոր քաղաք Բենգազիում հիմնել է սեփական նավթային ընկերություն, ինչպես նաեւ Կենտրոնական բանկ:

ՃԱՊՈՆԻԱ

# Ռադիոակտիվություն Ճապոնիայի որոշ մթերքներում եւ ջրում

## *Ստորգետնյա նոր ցնցումներ*

**Տոկիոյում խմելու ջրի մեջ ռադիոակտիվ յոդի քանակությունը արդեն կրկնակի գերազանցում է երեխաների համար անվտանգ համարվող մակարդակը: Այդ պատճառով խորհուրդ չի տրվում մանկական սնունդ պատրաստելիս ծորակի ջուր օգտագործել, նշում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Ջրի աղտոտվածության բարձր մակարդակ հայտնաբերվել է Տոկիոյի միայն մեկ շրջանում: Ավելի վաղ հաղորդվել էր, որ ռադիոակտիվ աղտոտման թույլատրելի նորմերի գերազանցում է արձանագրվել Ֆուկուշիմայի պրեֆեկտուրայում՝ «Ֆուկուշիմա-1» ատոմակայանից ոչ հեռու:**



**Ճապոնիայի առողջապահության նախարարության տվյալներով, նորման համապատասխանաբար 164 եւ 7 անգամ գերազանցող ցեզիումի ու յոդի իզոտոպներ են հայտնաբերվել մի շարք բանջարաբույսերում, այդ թվում՝ կաղամբում, սպանախում, ինչպես նաեւ որոշ արմտիքների տերեւներում: Երեկ նախարարությունը հայտարարել է Ֆուկուշիմայի պրեֆեկտուրայի 11 գյուղմթերքների ռադիոակտիվության մասին:**

**Վարչապետ Նաոտո Կանը մարտի 23-ին արգելք է սահմանել Ֆուկուշիմայի եւ Իբարակիի պրոֆեկտուրաներից կաթնամթերքի, սպանախի, մաղադանոսի եւ հազարի տեսակներից մեկի մատակարարման վրա: ԱՄՆ-ը իր հերթին արգելել է վթարված «Ֆուկուշիմա-1»-ի մերձակա շրջանների բանջարեղենի ու կաթնեղենի ներմուծումը:**

**ՄԱԳԱՏԷ-ի տվյալներով, ներկայումս ատոմակայանի շուրջը 20 կմ շառավղով ռադիոակտիվ ֆոնի մակարդակը նորման գերազանցում է 1600 անգամ: Ճապոնիայի իշխանությունները ԱԷԿ-ից մինչեւ 30 կմ հեռավորության վրա ապրող բնակիչներին կոչ են անում տանը մնալ եւ ծորակի ջուր չխմել:**

**Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ ռադիոակտիվ աղտոտման նշաններ են արձանագրվել բուն Տոկիոյի եւ հինգ արվարձանների ջրազտման կառույցներում:**

**Ճապոնիայում ռադիոակտիվ վարակման պատճառը երկրաշարժից եւ ցունամիից վնասված «Ֆուկուշիմա-1» ատոմակայանն է, որի ռեակտորների էլեկտրամատակարարումն արդեն վերականգնված է: Երկրաշարժի եւ ցունամիի զոհերի թիվն արդեն անցնում է 9300-ից: Ոստիկանության պաշտոնական ներկայացուցիչները հայտարարել են, որ զոհերի վերջնական ցանկում կլինի առնվազն 18 հազար անուն: Երեկ ոստիկանության հրապարակած տվյալների համաձայն՝ անհետ կորածների թիվը 13,8 հազար է:**

**Երեկ Ֆուկուշիմայի պրեֆեկտուրայի արեւելյան մասում արձանագրվել է 6 մագնիտուդով երկրաշարժ, որին հաջորդել են 5,8 եւ 5,9 մագնիտուդով ցնցումներ: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի տվյալներով, այդ երեք ցնցումների օջախը եղել է երկրի ընդերքում: Որոշ ժամանակ անց 5 մագնիտուդով ցնցում է արձանագրվել Տոկիոյում: Այս երկրաշարժը որեւէ վնաս չի պատճառել: Էպիկենտրոնը եղել է օվկիանոսի խորքերում:**

# Կուչմային կանչել են հարցաքննության



**Ուկրաինայի նախկին նախագահ Լեոնիդ Կուչմային հարցաքննության նպատակով գլխավոր դատախազություն են կանչել մարտի 22-ին «Իշխանության վերազանցում» հոդվածով նրա նկատմամբ հարուցված գործի կապակցությամբ: Քննիչները կարծում են, որ Կուչման ՆԳՆ ղեկավարությանն արել է կարգադրություններ, որոնք հանգեցրել են լրագրող Գեորգի Գոնգաձեի սպանությանը:**

**Լեոնիդ Կուչմայի «Ուկրաինա» հիմնադրամի մամլո ծառայությունը վկայակոչող «Ուկրաինսկայա պրավդա» թերթը հաղորդում է, որ նախկին նախագահը համարվում է այդ թերթի հիմնադիր Գոնգաձեի սպանության մեղսակիցը: Նման հայտարարությամբ մարտի 22-ին հանդես էր եկել Ուկրաինայի գլխավոր դատախազի տեղակալ Ռենատ Կուզմինը: Նրա խոսքերով, Կուչմայի նկատմամբ որպես կասեցման միջոց ընտրված է չմեկնելու պարտավորությունը:**

**Գոնգաձեն սպանվել էր 2000-ի աշնանը: Ութ տարի անց Ուկրաինայի ՆԳՆ արտաքին դիտարկման եւ քրեական հետախուզության վարչության 3 նախկին աշխատակիցներ դատապարտվել էին 13 տարվա (Նիկոլայ Պրոտասով) եւ 12 տարվա (Վալերի Կոստենկո եւ Ալեքսանդր Պոպովիչ) բանտարկության:**

**Քննիչները սպանության կազմակերպիչ են համարում հիշյալ վարչության նախկին պետ Ալեքսեյ Պուկաչին, որը ձերբակալվեց 2009-ին: Նրա դատավարությունը դեռ չի կայացել: Ոճրագործության պատվիրատու համարում էին ՆԳՆ նախկին ղեկավար Յուրի Կրավչենկոյին, որը չապրեց մինչեւ իր դատավարությունը:**

ԱԶԳ

ՄՇԱԿՈՒՅԹ

# Իտալացի հետազոտողի հայկական նոր ուսումնասիրությունները

## Ցուցադրություն Սեւրի Սամուել Մուրադյան մշակութային կենտրոնում

Ինչպես տեղեկացնում է ֆրանսահայ մեր լրատուն, Ազատ Վարդանեան ծածկանունով ստորագրող իտալացի աշխարհագրագետի, ճանապարհորդի, հետազոտողի ու լեռնագնացի տարիների ուսումնասիրությունների առարկան առնչվել է հայ ժողովրդի անցյալին ու հայկական հնագույն քաղաքակրթությանը:

Իր «Դուդուկի քաղցրահնչուն մեղեդի» գրքում նա զետեղել է իսլամացած հայերի հետ տարբեր զրույցներ:

Մեկ շաբաթ առաջ Վենետիկի Սբ Ղազար մայրավանքում իտալացի հետազոտողի «Արարատ. Նոյան տապանի հետքերով» ցուցահանդեսը՝ մեծադիր նկարներով, ներկայացնում էր հայոց բիբլիական լեռը՝ որպես հայության խորհրդանիշ: Ուշագրավ է հատկապես նրա 20 տարիների ուսումնասիրությունները Նոյան տապանի եւ Արարատի ստորոտում գտնվող քրդաբնակ գյուղերի վերաբերյալ: Այս վայրերում նա հայտնաբերել է ցեղասպանությանը զոհ բազմաթիվ հայերի գերեզմաններ: Նա նաեւ բացահայտել է, որ այդ գյուղերում ապրող քրդերի մեծ մասը իսլամացած հայեր են:

Ազատ Վարդանեանը մարտի 26-ին մեկ օրով կհյուրընկալվի Սեւրի Սամուել Մուրադյան կենտրոնում, որի պատվո սրահում կցուցադրեն նրա լուսանկարչական աշխատանքները վերոհիշյալ թեմաներով, կտրվի դասախոսություն՝ «Արարատ լեռան քաղաքակրթությունը» թեմայով, անդրադարձ նրա հայկական անցյալի հետքերին: Կներկայացվեն Նոյան տապանի փնտրտուքների մասին պատմող եւ քուրդ բնակիչների կյանքը նկարագրող նյութեր:

Օտար գիտնականի այս վկայությունները եւ նոր տվյալները 96 տարի առաջ տեղի ունեցած Հայոց ցեղասպանության իրողության փաստացի եւս մեկ արձանագրություն են:

Ս. Բ.

## Մարտի 27-ին նշվելու է թատրոնի միջազգային օրը

Մարտի 27-ը թատրոնի միջազգային օրն է: Հ. Պարոնյանի անվան թատրոնում այդ օրը մշակույթի նախարարությունն ու Թատերական գործիչների միությունը կանցկացնեն «Արտավազդ» ամենամյա մրցանակաբաշխությունը, որն այս տարի նվիրվում է Խորեն Աբրահամյանի ծննդյան 80-ամյակին:

Մրցանակաբաշխության հովանավորը «Հովնանյան ինտերնեյշնլ» ընկերությունն է: «Արտավազդը» անցկացվում է նաեւ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո:

Թատերական գործիչների միությունից տեղեկացանք, որ թատրոնի օրվան նվիրված միջոցառումների շրջանակում Արտաշատի Ա. Խարազյանի անվան թատրոնում ամսի 28-ին կազմակերպվելու է թատերականացված երեկո:

Ի. Պ.

## Գրական երեկո Գլենդեյլում

**Կալիֆոռնիայի Հայ գրողների միությունից տեղեկացանք, որ իրենց հաջորդ գրական հանդիպումը լինելու է մարտի 24-ին՝ Գլենդեյլի Հանրային գրադարանում: Հանդիպման ընթացքում կազմակերպվելու է նաեւ գրական երեկո՝ նվիրված հայր Տաճատ ծայրագույն վարդապետ Յարտմյանի գեղարվեստական ստեղծագործություններին: Լինելու են հեղինակային ընթերցումներ, արձակագիր Պողոս Գուբելյանը ներկայացնելու է գրական զեկուցում:**

Ի. Պ.

## Լույս է տեսել նոր ամսագիր՝ «Գրանիշ»

**«Գրանիշ» գրական ակումբի եւ «Անտարես» հրատարակչության համագործակցությամբ լույս է տեսել «Գրանիշ» գրական հանդեսը: Հանդեսի համարները թեմատիկ են լինելու: Առաջին համարը, որն ունի «Գրանիշ լեզվանի-Թե ինչպես լեզուն ստեղծեց գրականությունը, եւ գրականությունը ստեղծեց լեզու» անունը, նվիրված է գրականություն-լեզու փոխհարաբերությանը: «Գրանիշի» հեղինակները հույսով են, որ հանդեսը նոր հարթակ կդառնա գրականության քարոզման ու արդի հայ գրականության հեղինակությունը բարձրացնելու համար:**

**Ամսագիրն արդեն վաճառվում է«Բյուրոկրատ» գրախանութում եւ «Արտբրիջ» գրախանութ-սրճարանում: Իսկ առաջիկայում լինելու է առաջին համարի շնորհանդեսը:**

Ի. Պ.

ԹԱՏՐՈՆ

## «Տաղանդավոր երիտասարդները կարող են իրենց տեղը գտնել արվեստում, չնայած՝ խոչընդոտները միշտ էլ կան»

ՀՊԵԿԹ-ի (Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոն) 25- ամյա ռեժիսոր **Շուշանիկ Գեւորգյանը** կարծում է, որ մեր ժամանակներում միայն համապատասխան տվյալների առկայությամբ կարելի է արվեստի ոլորտում աշխատանք գտնել:

**- Որքա՞ն ժամանակ եք թատրոնում աշխատում որպես ռեժիսոր:**

- Համալսարանը ավարտելուց հետո եմ աշխատանքի անցել, 2008թ.-ին:

**- Ինչպե՞ս էք ընդունվել աշխատանքի: Դո՞ւք եք գտել աշխատանքը, թե՞ աշխատանքը՝ ձեզ:**

- Աշխատանքը ինձ (ժպտում է): Համալսարանում աչքի էի ընկնում «ստեղծագործական ակտիվությամբ» (մի քիչ գլուխ գովեմ), եւ ուսանողական աշխատանքներս արժանանում էին դասախոսներիս, մասնավորապես կուրսի ղեկավար Մայիս Ռաֆայելյանի բարձր գնահատականին: Ավարտելուց հետո, կուրսի ղեկավարի երաշխավորությամբ ընդունվեցի Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոն՝ մեկ ամիս փորձաշրջանով: Երեւի արդարացրի պարոն Երվանդ Ղազանչյանի սպասելիքները, քանի որ ընդունվելուց արդեն հինգ ամիս անց ինձ վստահեցին սեփական ներկայացում բեմադրել: Եվ այդպես «լույս աշխարհ եկավ» «Արեգնազան» ներկայացումը, որի պրեմիերան կայացավ ապրիլ ամսին:

**- Ի՞նչ եք կարծում, ո՞րն է պատճառը, որ հենց ձեզ ընդունեցին աշխատանքի: Ո՞րն էր ձեր առավելությունը:**

- Դե, մրցույթ այդ տեղի համար, որպես այդպիսին, չկար: Եվ ինչպես արդեն նշեցի, ես թատրոն մտա պարոն Ղազանչյանին իմ կուրսի ղեկավարի տված խորհրդով: Փորձաշրջան անցնելուց եւ նրանց սպասելիքները արդարացնելուց հետո, կարծում եմ, առավելություններից խոսելն ավելորդ է:

**- Ի՞նչ եք կարծում այն տարածված տեսակետի մասին, որ թատերականն ավարտածները միայն սերիալներում նկարահանվելով կարող են վաստակել իրենց ապրուստը:**

- Ցավով պետք է նշեմ, որ սա մեծ մասամբ համապատասխանում է իրականությանը, քանի որ, թեեւ երիտասարդները ընդունվում են թատրոն, բայց իրենց աշխատանքի դիմաց այնքան ցածր են վարձատրվում, որ առօրյա մանր ծախսերին նույնիսկ չի բավականացնում: Կարծում եմ այս հարցին պետք է մեծ ուշադրություն դարձնել: Եթե մենք ուզում ենք զարգացնել մեր թատրոնը, պետք է լավ դերասաններին թատրոնում պահելու պայմաններ ստեղծենք:

**- Այսինքն՝ երիտասարդների ճանապարհը բաց է:**

- Կարծում եմ՝ «բաց» ասելը այդքան էլ ճիշտ չի լինի: Տաղանդավոր երիտասարդները միշտ էլ կարող են իրենց տեղը գտնել արվեստում, չնայած՝ խոչընդոտները միշտ էլ կան: Բայց տաղանդը նրանով էլ տաղանդ է, որ կարողանում է խոչընդոտները հաղթահարել:

ՕՎՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# Գեղեցիկն ու մաքուրն արվեստագետն առաջինն իր մեջ պիտի գտնի



**Երբեմն պատահում է, որ մտնում ես մեկի տուն ու միանգամից հասկանում, որ սա ոչ միայն արվեստասերի, այլեւ արվեստագետի տուն է: Նման տուն մտա եւ ես: Պատերից կախված նկարները, տան տարբեր անկյուններում դրված քանդակներն ու կոլաժները, կենցաղային հասարակ իրերի գեղագիտական ձեւավորումը փաստեցին, որ չեմ սխալվում...**

**«Ինչ աչքս բացել եմ, արվեստի մեջ եմ եղել: Միշտ ձգտել եմ՝ պապայի պես նկարեմ, պապայի պես քանդակեմ. պապայի ազդեցությունը միշտ էլ եղել է ինձ վրա»,- խոստովանում է 25-ամյա Հայկ Մարկոսյանը՝ ավելացնելով. «Այս պայմաններում իմ ոճը ստեղծելը շատ դժվար եղավ, բայց շատ ուրախ եմ, որ երբ հիմա երկու նկար իրար կողքի են կախված, մարդիկ զանազանում են՝ որն է իմը, որը՝ հայրիկինս»:**

**Հայկի հայրը՝ Աշոտ Մարկոսյանը, քանդակագործ է, 1974 թ. ավարտել է Փ. Թերլեմեզյանի անվան ուսումնարանը: Քանդակագործության հանդեպ սերը իր մոտ ժառանգական չի եղել, առաջացել է 4-րդ դասարանում, երբ մի հնդկական ֆիլմ դիտելիս քանդակներ է տեսել ու տարվել է դրանով: Հենց այդ տարիքում էլ քանդակել է Վարդան Մամիկոնյանի եւ Սայաթ-Նովայի կիսանդրիները: Վերջինը հետագայում կորել է, իսկ առաջինն այժմ դրված է Արթիկի 7-րդ դարի եկեղեցու դռան մոտ եւ քչերը գիտեն, որ դա նրա գործն է:**

**Ա. Մարկոսյանը դեմ չի եղել, որ որդին շարունակի իր ուղին: Միշտ էլ ձգտել է, որ որդին ոչ թե իրեն նմանվի, այլ գտնի իրենը: Երբ Հայկն այլ ոճ ընտրեց, հայրը շատ գոհ էր եւ ուրախ: Հայկի համար մասնագիտության ընտրությունը երբեք էլ տարակուսանքի տեղիք չի տվել. փոքրուց էլ իմացել է՝ ինչ է դառնալու: 2008 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կիրառական արվեստների բաժինը, հետո Գյումրիում վերապատրաստվել է վարպետի մոտ: Համադրելով ուսուցիչների ոճերը՝ ստեղծել է իրենը. հիմնական ուղղվածությունը գեղանկարչությունն է. «Գտնում եմ, որ յուրաքանչյուր երեխա էլ դպրոցից պիտի ուսումնասիրի նկարչություն, որովհետեւ այն արվեստի, բնության, գեղեցիկի նկատմամբ սեր է ձեւավորում, ճաշակ է կրթում»,- նշում է Հայկը:**

**Ավագ արվեստագետը գտնում է, որ մշտական կապի մեջ է բնության հետ: Աշխատանքները ոչ միայն քարից են, գիպսից, կավից, այլեւ՝ փայտից: Ծառի արմատներից, ճյուղերից այնպիսի բաներ է ստեղծում, որ հեռվից դիտելիս երբեք չես ասի, որ փայտից են:**

**Պակաս կապված չէ բնությանը նաեւ որդին. նկարներում մեծամասամբ գյուղական պարզ միջավայրն է, կիսախարխուլ ու հնամենի տները, որոնք իրենց մեջ ընտանեկան դարավոր ջերմություն ու իրական կյանք են պարունակում:**

**Ըստ Ա. Մարկոսյանի, թեեւ քանդակագործությունն ու նկարչությունը շատ կապված են իրար, բայց նկարչությունն ավելի մեծ հնարավորություններ է տալիս: Այնուամենայնիվ նրա համար առաջնահերթը, հոգեհարազատ քանդակագործությունն է, իսկ նկարում է միայն ազատ ժամանակ:**

**Ի տարբերություն հոր, որդին քանդակով քիչ է զբաղվում՝ երբեմն փոքրիկ խաչքարեր է պատրաստում, նաեւ խեցեգործությամբ է հետաքրքրվում:**

**«Քանդակագործը բազմակողմանի զարգացած մարդ պիտի լինի, շատ կարդացած, լավ իմանա անատոմիա, հոգեբանություն»,- վստահեցնում է քանդակագործը եւ հավելում. «Պատահում է, որ պատվերը չեմ ընդունում, եթե սխալ բան են պահանջում, բայց բացատրում եմ դրա անհնարինությունը»:**

**Արդեն 24 տարեկանում Հայկը ստացել է ժողովրդական վարպետի կոչում, մասնակցել է շատ ցուցահանդեսների, Երեւանում ունեցել է նաեւ 3 անհատական ցուցահանդես. «Անհատական ցուցահանդեսը շատ պատասխանատու երեւույթ է, կարծես ստուգողական աշխատանք լինի: Հատկապես 1-ին ցուցահանդեսիս ժամանակ աննկարագրելիորեն մեծ էր հուզմունքս»,- պատմում է նա:**

**Իսկ ավագ արվեստագետի բախտը այս առումով «չի բերել». «Իմ երիտասարդության լավ տարիներին երկիրը քանդվեց, երկրաշարժ եղավ ու ստիպված էի ավելի շատ կենցաղի մասին մտածել»,- հիշում է նա: «Երկրաշարժից հետո սկսեց գերեզմանի քարեր քանդակել»,- հավելում է կինը՝ տիկին Էլմիրան: Այդ ժամանակ հիմնականում աստվածաշնչյան թեմաներով քանդակներ էին պատվիրում: Բայց անցյալ տարվանից էլ գերեզմանաքարեր չի պատրաստում:**

**Ա. Մարկոսյանը շատ պատվերներ է ստանում, նույնիսկ արտասահմանից. «Ավելի շատ սիրում եմ առանց պատվերների աշխատել, որովհետեւ սահմանափակված չեմ, իրականացնում եմ բոլոր մտահղացումներս»: Այդպիսի գործերից մեկն էլ՝ Քրիստոսի քանդակը, գնել է բռնցքամարտիկ Արթուր Աբրահամը եւ տեղադրել է Նորագավիթում:**

**Հայկը դեռ երիտասարդ է, դեռ չի կարեւորում եկամուտը. «Եթե արվեստը մարդու համար միայն եկամտի աղբյուր է դառնում, իրականում նա շատ է հեռանում արվեստից, իր ոճից, իր մտածողությունից»,- ընդգծում է Հայկը: Երիտասարդ արվեստագետին բարկացնում է, որ այսօր շատերը իբր դիմում են աբստրակցիայի ոճին, ինչ-որ անհասկանալի բան են գծում ու իրենց նկարիչ են հռչակում. «Մարդ պիտի կարողանա ակադեմիական նկարն անել, նոր միայն անցնի այլ ոճերի: Սալվադոր Դալին այնքան լավ էր ակադեմիական նկարչությունից, այն կարգի դպրոց էր անցել, որ կարող էր Ռեմբրանտի պես դիմանկար նկարել, բայց իր ոճը գտավ աբստրակցիայի մեջ»:**

**Հայր ու որդի եւս մեկ ընդհանուր նախասիրություն ունեն՝ որսորդությունը: Ի տարբերություն հոր, որը մոտ 35 տարի է զբաղվում է որսորդությամբ, Հայկը դեռ ոչ մի կենդանու չի սպանել. ինչպես նկատում է մայրը, որդուն ավելի շատ որսորդության ռոմանտիկ պահն է գրավում:**

**Հայկը, թեեւ Երեւանում աշխատանք ուներ, բայց նախընտրեց վերադառնալ հայրենի քաղաք՝ Արթիկ: «Ինչ էլ որ լինի, քո տունն ուրիշ է, մանավանդ որ միայն մեր արվեստանոցում եմ կարողանում լավ նկարել»,- խոստովանում է Հայկը եւ ավելացնում, որ շատ է ուզում, որ իր հայրենի քաղաքում երեխաների կապը արվեստի հետ մեծանա: Ծրագրում է Արթիկում, հետո նաեւ՝ Արցախում ցուցահանդեսներ կազմակերպել:**

**Ավագ արվեստագետն էլ պլաններ ունի՝ կապված իր հայրենի քաղաքի հետ. ուզում է արթիկցիների պարծանքի՝ Կարմիր վանքի մոտ մի լավ քանդակ դնել. «Մեր քաղաքի սիրահարները հաճախ վանքի մոտ են հանդիպում: Մտածում եմ, որ կարելի է նրանց հովանավոր մի քանդակ անել»:**

**Երիտասարդ արվեստագետը մի մեծ երազանք էլ ունի, մի երազանք, որը երեւի բնորոշ է բոլոր նկարիչներին՝ իր գործերը տեսնել աշխարհի ամենամեծ պատկերասրահներում:**

ԱՆԻ ՌԱՓՅԱՆ



# Սյուզի Քենտիկյան-Անա Արրազոլա մրցամարտը՝ մարտի 26-ին



Շաբաթ օրը, ժամը 22-ին ութամսյա «մարտական» դադարից հետո Համբուրգում ռինգ դուրս կգա բռնցքամարտի թեթեւքաշայինների աշխարհի չեմպիոնուհի Սյուզի Քենտիկյանը: 23-ամյա Սյուզիի մրցակցուհին մեքսիկուհի Անա Արրազոլան է:

Այն հարցին, թե ութամսյա դադարն ինչպե՞ս է լցրել, Սյուզին պատասխանում է՝ «շատ եմ ճամփորդել՝ ԱՄՆ, Հայաստան, շատ բան եմ հասցրել անել ու ինձ հիմա թարմ եմ զգում»: Իր մրցակցի մասին Քենտիկյանն իմացել է մրցամարտից երեք շաբաթ առաջ, դիտել է նրա մենամարտերի տեսագրությունները եւ կարծիք հայտնել, թե «Արրազոլան շատ փորձառու է, հետամուտ նպատակին՝ իսկական մեքսիկուհի է, սիրում եմ այդ ոճը»: Մեր ընթերցողներին արդեն իրազեկել ենք, որ անցած ամիսներին մարզումներին զուգահեռ Սյուզին սպասման մեջ էր անցկացնում: Ունիվերզում ակումբը, ուր հանդես էր գալիս մեր հայրենակցուհին, մրցումներ կազմակերպելու խնդիրներ ուներ:Հունվարին Սյուզին պիտի ռինգ դուրս գար, հետաձգվեց, հետո հայտարարվեց, թե մրցամարտը փետրվարին է լինելու, դարձյալ չկայացավ:Հիմա վերջապես մարտին, բայց ուրիշ ակումբի հետ՝ մենեջեր Ուլֆ Շթայնֆորթի եւ նրա SES բռնցքամարտի ակումբի կազմում: Մարզիչը, ինչպես նախկինում, Մագոմեդ Շաբուրովն է:

Քենտիկյանը վերջին անգամ ռինգում իր ուժերն է չափել 2010-ի հուլիսի 17-ին՝ մեքսիկուհի Արելի Մուչինոյի դեմ կայացած մրցամարտում: Գլխին ստացած հարվածների պատճառով Սյուզին վնասվածք էր ստացել, մրցամարտը չգնահատվեց: WIBF, WBA, WBO վարկածներով աշխարհի չեմպիոնուհին 27 մրցամարտ հաղթանակով է պսակել:

Մի բան էլ՝ հիշեցման կարգով: «Ազգի» ընթերցողներն արդեն տեղյակ են, որ մարտին Գերմանիայում լույս տեսավ Քենտիկյանի ինքնակենսագրականը՝ «Ինձ ոչինչ նվեր չի տրվել» վերնագրով:« Կյանքիս մանրամասների մասին՝ ինչպես եմ մեծացել, ինչպես եմ հայտնվել Գերմանիայում, շատ էին հարցնում: Ես էլ ամեն ինչի մասին պատմել եմ իմ գրքում», գրելու շարժառիթը բացատրել է Սյուզին:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա**

ՇԱԽՄԱՏ

## Արոնյանը մոտ է ընդհանուր հաջողությանը

**Մոնտե Կառլոյի շախմատի մրցաշարում հաղթարշավն է շարունակում Լեւոն Արոնյանը: 10-րդ տուրում Լեւոն Արոնյանի մրցակիցը բուլղարացի գրոսմայստեր Վեսելին Թոփալովն էր: «Կույր» շախմատի պարտիայում, որտեղ Արոնյանն իր հավասարը չունի, հայ շախմատիստը կրկին հիանալի խաղաց ու հերթական հաղթանակը տոնեց: Այս մրցաձեւում Արոնյանը 10 հնարավորից վաստակել է 8 միավոր:**

**Արագ շախմատի պարտիան 37-րդ քայլին ավարտվեց ոչ-ոքի: Այսպիսով, Արոնյանը 10-րդ տուրից հետո վաստակեց 14,5 միավոր ու շարունակում է վստահորեն գլխավորել աղյուսակը: Նա գերազանց հնարավորություն ունի դառնալու մրցաշարի հաղթող:**

**Արոնյանին հետապնդող Մագնուս Կառլսենը Ալեքսանդր Գրիշչուկի հետ «կույր» շախմատի պարտիայում հաշտություն կնքեց: Նրանց միջեւ կայացած արագ շախմատի պարտիան ավարտվեց ուշ երեկոյան: Նույնիսկ եթե Կառլսենն այդ պարտիայում հաղթեր, նա Արոնյանից մեկ միավորով հետ կմնար:**

**Կույր շախմատի մրցախաղերում բացի Արոնյանից, հաղթանակ տոնեց միայն Բորիս Գելֆանդը՝ առավելության հասնելով Անիշ Գիրիի նկատմամբ: Կրամնիկ- Իվանչուկ, Կարյակին-Նակամուրա, Անանդ-Հաշիմով պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:**

**Այսօր կայանալիք ավարտական տուրում Լեւոն Արոնյանը կմրցի Սերգեյ Կարյակինի հետ: Կառլսենը կհանդիպի Բորիս Գելֆանդի հետ:**

## Հայ շախմատիստների տպավորիչ մեկնարկը

**Հայաստանի շախմատիստները բավական հաջող մեկնարկեցին Ֆրանսիայի Էքս լը Բեն քաղաքում սկսված շախմատի Եվրոպայի տղամարդկանց անհատական առաջնությունում: Մեր 9 պատվիրակներից 7-ը մեկնարկեցին հաղթանակով: Գաբրիել Սարգսյանը սեւերով հաղթեց Քրիստոֆ Օլիվիերին: Սպիտակներով Արման Փաշիկյանը պարտության մատնեց Լենկա Պտաչնիկովային, Ավետիք Գրիգորյանն առավելության հասավ Ռալֆ Շնաբելի նկատմամբ, Հրանտ Մելքումյանն էլ հաղթեց Սերգեյ Նաուդիերին:**

**Հաջող էր նաեւ Հայաստանի չեմպիոն Ռոբերտ Հովհաննիսյանի մեկնարկը, որը սեւերով պարտության մատնեց Վլադիմիր Զուբարին: Սամվել Տեր-Սահակյանն իր օգտին հաղթական միավոր գրանցեց Ազար Իզաթի հետ մրցավեճում: Զավեն Անդրեասյանը սեւերով հաղթեց Նիկոլաս Գիֆարդին: Վլադիմիր Հակոբյանը հաշտություն կնքեց Դավիթ Զարկուայի հետ: Միակ պարտությունը կրեց Վլադիմիր Պողոսյանը՝ զիջելով Յանիկ Պելետիեին:**

**Հաղթական էր նաեւ ֆրանսահայ Տիգրան Ղարամյանի մեկնարկը, որն առավելության հասավ Նիկոլայ Մաեւսկու նկատմամբ:**

**Եվրոպայի առաջնությանը մասնակցում են 393 շախմատիստներ, այդ թվում նաեւ կանայք: Լավագույն արդյունքի հասած 23 մասնակիցներն աշխարհի գավաթի խաղարկության ուղեգիր կնվաճեն:**

## Կրկին ոչ-ոքի

Տաշքենդի շախմատի մրցաշարի 5-րդ տուրում Տիգրան Պետրոսյանը կրկին ոչ-ոքի խաղաց: Այս անգամ նա հաշտություն կնքեց Իսրայելը ներկայացնող Միխայել Ռոիզի հետ: 5 տուրից հետո Պետրոսյանը 4 միավորով 3-րդ տեղում է: Միանձնյա առաջատարը վրացի գրոսմայստեր Միխեիլ Մչեդլիշվիլին է, որն ունի 4,5 միավոր: Նա պարտության մատնեց ղազախ շախմատիստ Ռինատ Ջումաբաեւին: 6-րդ տուրում Պետրոսյանը սեւերով կխաղա Խարիսմա Սուկանդարի հետ:

## Երեւանի եւ Արտաշատի մարզուհիները մրցակցությունից դուրս էին

**Երեւանի սամբոյի եւ ձյուդոյի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցի մարզադահլիճում ավարտվեց սամբոյի Հայաստանի կանանց եւ աղջիկների առաջնությունը: Չեմպիոնի տիտղոսը վիճարկեցին մոտ 50 մարզուհիներ:**

**Կանանց մրցաշարում առավել հաջող հանդես եկան երեւանցի սամբիստուհիները, որոնք քաշային 7 կարգերից 4-ում ուժեղագույնը ճանաչվեցին: Հանրապետության չեմպիոնուհու տիտղոսին արժանացան Աննա Մովսիսյանը (56 կգ), Լուսինե Սողոմոնյանը (64 կգ), Գայանե Խաչատրյանն (68 կգ) ու Թագուհի Բաբայանը (72 կգ):**

**Մինչեւ 48 կգ քաշայինների մրցավեճում ոսկե մեդալի արժանացավ արտաշատցի Ռուզաննա Սարգսյանը: Արտաշատի մյուս ներկայացուցիչն էլ վստահ հանդես եկավ 60 կգ քաշային կարգում: Հաղթելով բոլոր մրցակիցներին, պատվո պատվանդանի առաջին աստիճանին կանգնեց Լիլիթ Պողոսյանը: 52 կգ քաշային կարգում լավագույնը ստեփանակերտցի Սոսե Բալասանյանն էր:**

**Աղջիկների մրցաշարում տոն տվեցին Երեւանի եւ Արտաշատի մարզուհիները՝ ոչ մեկին չզիջելով չեմպիոնուհու տիտղոսը: Քաշային 4 կարգերում ուժեղագույնը ճանաչվեցին երեւանցիները՝ Լիլիթ Հախվերդյանը (48 կգ), Ալիսա Մանուկյանը (56 կգ), Ասիտա Լալազարյանը (60 կգ) եւ Նելլի Ավետիսյանը (65 կգ): Մյուս 3 քաշային կարգերում ուժեղագույնն արտաշատցիներն էին՝ Լիանա Միքայելյանը (44 կգ), Նարինե Պողոսյանը (52 կգ) եւ Քրիստինե Ղազարյանը (+75 կգ):**

**Ապրիլի 22-23-ը Վանաձորում կանցկացվի սամբոյի Հայաստանի տղամարդկանց առաջնությունը:**

## Հանդբոլիստուհիներին լուրջ փորձություն է սպասում



Հանդբոլի Հայաստանի մինչեւ 17 տարեկանների աղջիկների հավաքականը Ռումինիայի Յասի քաղաքում կմասնակցի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարին: Մեր հանդբոլիստուհիները կմրցեն Ռումինիայի, Իսրայելի եւ Հոլանդիայի հավաքականների հետ:

Մրցաշարի նախապատրաստական փուլը մեր հավաքականն անցկացրել է Ֆրանսիայում: Մարզումներին մասնակցել են նաեւ Ֆրանսիայի տարբեր քաղաքների թիմերում հանդես եկող հայազգի մարզուհիները, որոնք ընդգրկված են Հայաստանի հավաքականում: Ընտրական մրցախաղերին Հայաստանի դրոշի ներքո հանդես կգան Մարգո Թերզյանը, Ֆանի Աբրահամյանը, Մարի Միրաքյանը, Մաշա Բոյաջյանը, Նոյեմի Մուրադյանը:

Ֆրանսիայում մեր հավաքականը համատեղ մարզումներ անցկացրեց, նաեւ ուժերը փորձեց ստուգողական 3 խաղում: Հայաստանի հավաքականի մարզիչ Աստղիկ Գյուրջինյանը գոհ է կատարված աշխատանքից: Նա հնարավորություն ունեցավ ստուգելու թե հայաստանցի, թե ֆրանսահայ մարզուհիների խաղային ունակությունները:

## Մեսին ու Մոուրինյուն ամենաբարձր վարձատրվողներն են

«Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթի տվյալներով իսպանական «Բարսելոնի» եւ Արգենտինայի հավաքականի հարձակվող Լիոնել Մեսին աշխարհում ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստն է: Նա տարեկան 31 մլն եվրո է վաստակում: 2-րդ տեղում Մադրիդի «Ռեալի» եւ Պորտուգալիայի հավաքականի կիսապաշտպան Քրիստիանու Ռոնալդուն է (27,5 մլն եվրո): Ամենահարուստ ֆուտբոլիստների եռյակը եզրափակում է «Մանչեսթր Յունայթեդի» կիսապաշտպան Ուեյն Ռունին՝ 20,7 մլն եվրո:

Իսկ Ժոզե Մոուրինյուն, որ ներկայումս գլխավորում է Մադրիդի «Ռեալը», աշխարհի ամենաբարձր վարձատրվող մարզիչն է: Նրա տարեկան վաստակը 13,5 մլն եվրո է: 2-րդ տեղում «Բարսելոնի» գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան է (10,5 մլն եվրո): Լավագույն եռյակը եզրափակում է «Ինտերի» գլխավոր մարզիչ Ռաֆայել Բենիտեսը (10,2 մլն եվրո):

## Բրազիլիան ու ԱՄՆ-ը կհամագործակցեն

Բրազիլիան եւ ԱՄՆ-ը 2014-ի ֆուտբոլի աշխարհի առաջնության եւ 2016-ի ամառային օլիմպիական խաղերի կազմակերպման գործում համագործակցության պայմանագիր են կնքել: ԱՄՆ-ի պետական բանկը 1 մլրդ դոլարի փոխառություն է տրամադրել Բրազիլիային մրցումների կազմակերպման համար: Այդ գումարի մեծ մասը կծախսվի մարզական եւ սոցիալական ենթակառուցվածքների ստեղծման վրա:

## Բլատերը ՖԻՖԱ-ից կհեռանա 2015-ին

ՖԻՖԱ-ի նախագահ Յոզեֆ Բլատերը հայտարարել է, որ եթե կրկին վերընտրվի իր պաշտոնում, ապա 2015-ին հրաժարական կտա: Հիշեցնենք, որ ՖԻՖԱ-ի նախագահի ընտրությունները տեղի են ունենալու այս տարվա հունիսի 1-ին: 75-ամյա Բլատերը ՖԻՖԱ-ն գլխավորում է 1998-ից:

ՖԻՖԱ-ի նախագահի պաշտոնում Բլատերի միակ հակառակորդը Ասիայի ֆուտբոլի կոնֆեդերացիայի նախագահ Մոհամեդ բեն Համամն է: Նա ժամանել էր Փարիզ, որտեղ տեղի էր ունենում ՈՒԵՖԱ-ի համաժողովը: Համամի այցի նպատակն էր հանդիպել ՈՒԵՖԱ-ի նախագահի պաշտոնում կրկին վերընտրված Միշել Պլատինիի հետ ու ստանալ նրա աջակցությունը ՖԻՖԱ-ի նախագահական ընտրություններում:

## Աբրահամն ու Ուորդը կմենամարտեն մայիսի 14-ին

**Երկրորդ միջինքաշային կարգի Super Six մրցաշարի Աբրահամ-Ուորդ կիսաեզրափակիչ մենամարտը կկայանա մայիսի 14-ին ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգի Կարսոն քաղաքում:**




**«Մեծ հարգանքով եմ վերաբերվում WBA-ի վարկածով երկրորդ միջինքաշային կարգի աշխարհի չեմպիոն Անդրե Ուորդին: Նա հաստատել է բարձր կարգը՝ հաղթելով մի շարք ուժեղ բռնցքամարտիկների: Սակայն ռինգում այդ ամենը նշանակություն չի ունենա: Պատրաստ եմ վերադարձին: Իսկական չեմպիոնը մշտապես պետք է կարողանա պարտությունից հետո ռինգ վերադառնալ ու հետ բերել կորցրած տիտղոսը: Անհամբերությամբ եմ սպասում մայիսի 14-ին: Կապացուցեմ, թե ռինգում ինչի եմ ընդունակ», հայտարարել է Արթուր Աբրահամը:**

**Իր ուժերին վստահ է նաեւ Անդրե Ուորդը. «Պատրաստ եմ ռինգ վերադառնալ եւ մայիսի 14-ին մենամարտել Արթուր Աբրահամի հետ: Ինձ ընդամենը մեկ քայլ է բաժանում եզրափակիչ մենամարտից, որում եւս հաղթելու դեպքում կդառնամ երկրորդ միջինքաշային կարգում լավագույն բռնցքամարտիկը: Լոս Անջելեսում Արթուրին երկրպագողների բանակը մեծ կլինի, սակայն ինձ աջակցողների թիվն էլ փոքր չի լինի»:**

**Հիշեցնենք, որ Արթուր Աբրահամը պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 34 մենամարտերից 32-ում հաղթել է, կրել է միայն 2 պարտություն: Ամերիկացի Անդրե Ուորդը 27 տարեկան է, 4 տարով փոքր է Արթուրից: Նա առայժմ անպարտելի է՝ շահելով բոլոր 23 մենամարտերը:**

**Super Six մրցաշարի կիսաեզրափակիչ մյուս մենամարտը կկայանա մայիսի 21-ին: Մրցավայրը դեռեւս հայտնի չէ: Այդ օրը ռինգ դուրս կգան WBC-ի վարկածով երկրորդ միջինքաշային կարգի աշխարհի ներկայիս չեմպիոն Կառլ Ֆրոչը եւ Գլեն Ջոնսոնը:**

## Վյաչեսլավ Մալաֆեեւը կժամանի Երեւան

**Սանկտ Պետերբուրգի «Զենիթի» դարպասապահ Վյաչեսլավ Մալաֆեեւը ցանկություն է հայտնել ՌԴ հավաքականի կազմում ժամանել Երեւան, չնայած անցած շաբաթ տեղի ունեցած ավտովթարի հետեւանքով մահացել էր նրա կինը: Մալաֆեեւը ՌԴ հավաքականի 2-րդ դարպասապահն է: Հիմնական դարպասապահ Իգոր Ակինֆեեւն անվստահ էր հանդես եկել ստուգողական վերջին հանդիպումներում, ուստի դեռեւս պարզ չէ, թե Երեւանում Դիկ Ադվոկատը դարպասապահներից ում կվստահի դարպասի պաշտպանությունը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱՄԵՐԻԿԱ

# «Հայկական ստերին վերջ տալու եւ նահատակներին հիշատակելու» հանրահավաք Նյու Յորքում

*Դա «Երիտասարդ թուրքերի միության» նախաձեռնությամբ կկազմակերպվի ապրիլի 30-ին*

ԱՄՆ-ում բնակվող թուրքերի, ավելի շուտ՝ Թուրքիայի քաղաքացիների թիվը շուրջ 250 հազար է, որոնք ունեն ավելի քան 100 միություններ: Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի գլխավոր առաջադրանքով կազմավորված այս միությունների գործունեությունը Թուրքիայի արտգործնախարարության հետ սերտ համագործակցությամբ վերահսկում են «Թուրքական ֆորումն» ու «Ամերիկայի թուրքական միությունների ֆեդերացիան»:

Այս երկու կազմակերպությունների վերահսկողության տակ է նաեւ Նյու Յորքում գործող «Երիտասարդ թուրքերի միությունը», որը թուրքական ժխտողականության առաջամարտիկի կարգավիճակով ստանձնել է «Հայկական ստերին վերջ տալու եւ նահատակներին հիշատակելու» հանրահավաքի կազմակերպման պարտականությունը: Այս տարվա հանրահավաքը, որը 7-րդն է լինելու, նախատեսվում է կազմակերպել ապրիլի 30-ին, նույնպես Նյու Յորքի «Թայմս» հրապարակում:

Ինչպես երեկ նշել էր Նյու Յորքի «թուրքական» կայքէջը, հանրահավաքի կազմակերպման առնչությամբ հայտարարություն է արել «Երիտասարդ թուրքերի միության» նախագահ Թուլգա Թեքմանը: Նա մասնավորապես ասել է. «Ամերիկայի թուրքական համայնքը «ո՛չ» ասելով հայկական ստերին, պետք է միասնաբար տեր կանգնի մեր ազգային դասին: Անհրաժեշտ է, որ ճշմարտությունն իմանա ողջ աշխարհը: Ապրիլի 30-ին կհավաքվենք թուրքական փառապանծ դրոշի ներքո եւ միասնաբար, ինչպես բարեկամին, այնպես էլ թշնամուն, կներկայացնենք մեր արդարացի դասը: Վերջին տարիներին ազգային դասին տեր կանգնելու եւ ճշմարտությունը ամերիկացիներին հասցնելու մեր ջանքերն արդյունք են տվել, որ հայկական լոբբին՝ մատնվելով խուճապի, ավելի շատ մասնակիցներ ներգրավելու համար որոշել է հանրահավաք անցկացնել մայիսի 1-ին: Մենք էլ հայերին ճնշելու եւ նրանց ազդեցությունը թուլացնելու համար որոշեցինք հանրահավաքը մեկ օր շուտ՝ ապրիլի 30-ին կազմակերպել»:

Վերջում Թեքմանը նշել է, որ առաջիկա հանրահավաքում թուրքերի եւ ադրբեջանցիների դեմ հայերի կատարած բռնության եւ իրականացրած կոտորածների մասին իրազեկելու են ամերիկյան հասարակական ողջ կարծիքին:

Ի դեպ, նախորդ տարիներին Նյու Յորքում այս միության կազմակերպած հանրահավաքները մասնակիցների սակավաթվության (ընդամենը մի քանի տասնյակ մարդ էր մասնակցում) պատճառով կատարյալ հիասթափություն էին պատճառել թուրքական շրջանակներին եւ հատկապես կազմակերպիչներին:

Հ. Չ.

# Մեսրոպ քահանա Արամյանը՝ Մոնրեալում

«Արարատից Սիոն» վավերագրական ֆիլմի հեղինակ **Մեսրոպ քահանա Արամյանը** Կանադայի հայկական եկեղեցական թեմի հրավերով Մոնրեալ է ժամանել՝ մասնակցելու երկու կարեւոր միջոցառումների, տեղեկացնում է այդ առթիվ հրապարակված հայտարարությունը: Բացի հոգեւոր հովիվ լինելուց, Արամյանը նաեւ գրող եւ թարգմանիչ է, ինչպես նաեւ «Գանձասար» Աստվածաբանական կենտրոնի հիմնադիրն ու տնօրենը: Հ. Ծ.

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Տեղեկատվական տեխնոլոգիաների դպրոց հիմնադրամի 2010 թ. գործունեության մասին**

Հիմնադրամի լրիվ անվանումն է՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների դպրոց հիմնադրամ:

Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 08.07.2010 թ., պետական գրանցման վկայական՝ 03Ա 088292:

Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ 0070 ՀՀ ք. Երեւան, Քաջազնունի 1, հեռ. 55-91-26:

Իրականացված ծրագրերն են՝ վեբ ծրագրավորման դասընթաց, հանրօգուտ կայքերի պատրաստման ծրագիր, բաց դասեր:

Ֆինանսավորման աղբյուրներն են՝ ֆիզիկական անձինք (925.000 դրամ):

Ֆինանսական տարում օգտագործված միջոցների չափն է՝ 742.000 դրամ, որից կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝ 742.000 դրամ:

**Գլխավոր տնօրեն՝** **Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

**Գլխավոր հաշվապահ՝** **Մ. ԳԱՐԱԳԱՇՅԱՆ**

**Հաստատված է հոգաբարձուների խորհրդի կողմից**

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Առաջնորդության դպրոց հիմնադրամի 2010 թ. գործունեության մասին**

Հիմնադրամի լրիվ անվանումն է՝ Առաջնորդության դպրոց հիմնադրամ:

Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 09.04.2009 թ., պետական գրանցման վկայական՝ 03Ա 083840:

Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ 0070 ՀՀ ք. Երեւան, Քաջազնունի 1, հեռ. 55-91-26:

Իրականացված ծրագրերն են՝ Առաջնորդության զարգացման դասընթաց, Ապագա առաջնորդներ ծրագիր, մեկ թիմ մեկ երկիր ծրագիր, բաց դաս:

Ֆինանսավորման աղբյուրներն են՝ ֆիզիկական անձինք (2.977.000 դրամ):

Ֆինանսական տարում օգտագործված միջոցների չափն է՝ 2.791.000 դրամ, որից կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝ 2.791.000 դրամ:

**Գլխավոր տնօրեն՝** **Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

**Գլխավոր հաշվապահ՝** **Մ. ԳԱՐԱԳԱՇՅԱՆ**

**Հաստատված է հոգաբարձուների խորհրդի կողմից**

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**«Առաջնորդության զարգացման կենտրոն» հիմնադրամի 2010 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի լրիվ անվանումն է՝ «Առաջնորդության զարգացման կենտրոն» հիմնադրամ
2. Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 06.08.2010 թ., պետական գրանցման վկայական՝ 03Ա 088300
3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երեւան, Արմենակ Արմենակյան 2/5
4. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավար՝ Էմմա Աթոյան
5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Սարգիս Գրիգորյան, Վարուժան Ավետիսյան, Արա Ջալաբյան, Սոնա Բաղդասարյան, Կոմիտաս Ստեփանյան
6. Աշխատակազմ՝ Էմմա Աթոյան
7. Ֆինանսական աղբյուրների բացակայության պատճառով հիմնադրամը 2010 թ. ընթացքում ծրագրեր չի իրականացրել:
8. Ֆինանսական տարում միջոցների մուտք չի ունեցել եւ ծախսեր չեն կատարվել:

***Տնօրեն՝ ԷՄՄԱ ԱԹՈՅԱՆ***

*Հավելված N 1*
*ՀՀ արդարադատության նախարարի*
*2009 թվականի դեկտեմբերի 22-ի*
*N 319-Ն հրամանի*

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Սի.Օ.Էյ.Էֆ. Մանուկների բարեգործական հիմնադրամի 2010 թ. գործունեության մասին**

1. Կազմակերպության լրիվ անվանումը՝ Սի.Օ.Էյ.Էֆ. մանուկների բարեգործական հիմնադրամ:
2. Կազմակերպությունը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 07.10.2003 թ., պետական գրանցման վկայական՝ 03 Ա 061107:
3. Կազմակերպության գտնվելու վայրը՝ Երևան, Հյուսիսային պողոտա 1, սենյակ 24, հեռ.՝53-34-12:
4. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ **Սերոբ Խաչատրյան**

5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝
**1. Կարո Արմեն**
**2. Ալիս Սարայդարյան**
**3. Գրեգ Էքիզյան**

6. Աշխատակազմը՝
________________________________________________
(անունը, ազգանունը, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձեւը, ստացած օգնության չափը (դրամական արտահայտությամբ)

7. Իրականացված ծրագրերը՝
**Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների համապարփակ մասնակցային զարգացման ծրագիր**

8. Ֆինանսավորման աղբյուրները՝
**1.Չիլդրեն օֆ Արմենիա Ֆանդ, ՀՀ գյուղական համայնքների համապարփակ մասնակցային զարգացման ծրագիր, 727 674 151 դրամ**
**2. Էյչ Էս Բի Սի, Էյչ Էս Բի Սի Գլոբալ Թրաստ, 9 456 828 դրամ**
**3. Էյչ էս Բի Սի, «Առանց պլաստիկե տոպրակների համայնքներ», 4 892 625 դրամ**
**4.ԱՄՆ դեսպանատուն, «Աշակերտական խորհուրդների ցանցի հիմնում դրամաշնորհ», 3 273 792 դրամ**
**5. ԲՀԻ-ի օժանդակության հիմնադրամ, «Անապահով խավերին սոցիալական օգնության տրամադրում», 9 360 529 դրամ:**

9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝
758 936 606 դրամ

10. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝
**758 936 606 դրամ**

11. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը:

Մեր կարծիքով 2010թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը «Սի. Օ. Էյ. Էֆ. Մանուկների բարեգործական» Հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին: Հաշվապահական հաշվառումը վարվում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջներին և հաշվապահական հաշվառման կանոններին համապատասխան, իսկ ՖՀՆՄՍ-ը կիրառվում են անվերապահորեն:

Աուդիտոր՝
Մ. Մկրտչյան

Գործադիր տնօրեն ՝ Ս. Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ՝ Մ. Գևորգյան

Հաստատված է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:

**Հիմնադրամների կողմից հրապարակվող և ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացվող**

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի 2010թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ **«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ**
2. Հիմնադրամը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարի 13.10.2000թ. թիվ 1063 հրամանով, պետական գրանցման վկայական թիվ 137 եւ Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից **«17» սեպտեմբերի 2004թ., պետական գրանցման վկայական 03Ա 065369**:
3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ **ք. Երեւան, 0033, Գյուլբենկյան 31շ, բն. 20:**
4. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ **գործադիր տնօրեն՝ Ռուզաննա Ծառուկյան**
5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ **Գայանե Ղուկասյան**
անդամները՝
Սերոբ Խաչատրյան
Արտաշես Թորոսյան
Գայանե Զարգարյան
Մարինե Պետրոսյան

6. Աշխատակազմը՝
____ ____________________________________

7. Իրականացված ծրագրերը՝
- «Քայլ առ քայլ» վաղ մանկության ծրագիր
- «Ծնողական կրթություն» ծրագրի գնահատում
- «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու եւ գրելու միջոցով» ծրագրի ինստիտուցիոնալիզացման ծրագիր
- «Քայլ առ քայլ» ծրագրի իրականացումը Արմավիրի մարզում
- Նախադպրոցական կրթության ծրագիր 5-6 տարեկան երեխաների կարճաժամկետ խմբերում
- «Ծնողական կրթություն» ծրագիր
- ՎՄՉ ռեսուրսների քարտեզագրման ծրագիր

8. Ֆինանսավորման աղբյուրները՝ **Դրամաշնորհներ հետեւյալ կազմակերպություններից՝** Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ-UNICEF, «Քաունթերփարթ ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն **ծառայությունների մատուցումից եկամուտներ հետեւյալ կազմակերպություններից՝**«Չքավոր երեխաների աջակցության ակցիա-Հայաստան» ՀԿ, «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ, Հայաստանի մանուկներ հիմնադրամ, «Քայլ առ քայլ» միջազգային ընկերակցություն-ISSA:

9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 75,405.2 հազար ՀՀ դրամ

10. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝ 75,405.2 հազար ՀՀ դրամ

***Ղեկավար՝ Ռ.Ծառուկյան***

***Գլխ. հաշվապահ՝ Ա.Փաշինյան***

11. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի ֆինանսական վիճակի առ 31.12.2010թ., ինչպես նաեւ այդ ամսաթվի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկեր ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

***Հաշվետվությունը հաստատվել է հոգաբարձուների խորհրդի կողմից:***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 23.3.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: